

ՀԱՅ – ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ Գազիկ Հարությունյան

Այս տարվա օգոստոսին ՀՀ եւ ՌԴ նախագահների Երեւանում կայացած հանդիպումը նոր լիցք հաղորդեց ռուս-հայկական հարաբերություններին եւ զգալիորեն բարձրացրեց Հայաստանի անվտանգության մակարդակը: Հիշեցնենք, որ հանդիպման արդյունքում երկարաձգվեց եւ նոր բովանդակություն ստացավ ռուսական ռազմակայանի մասին պայմանագիրը, իսկ հայտնի է, որ 102-րդ ռազմակայանի առկայությունը երաշխավորում է Հայաստանի անվտանգությունը թուրքիայի հնարավոր ագրեսիայից:

Միեւնույն ժամանակ, թուրքիան որոշակի սպառնալիք է նաեւ Ռուսաստանի համար: Թուրքիան շարունակաբար փորձում է գերիշխող դիրք գրավել Հարավային Կովկասում, եւ նման հերթական փորձը տեղի ունեցավ 2008թ., Հարավային Օսիայի շուրջ ռազմական գործողությունների ժամանակ, երբ, փորձելով օգտվել ստեղծված իրավիճակից, Թուրքիան հանդես եկավ տարածաշրջանում նոր քաղաքական պլատֆորմ ստեղծելու առաջարկով: Այսօր այդ նախաձեռնության դրսեւորումներն են Թուրքիա–Ադրբեջան–Վրաստան համադաշնության կազմավորման նախագծերը, ինչպես նաեւ Նախիջեւանում ռազմակայանի հնարավոր տեղակայումը՝ որպես հակակշիռ ռուսաստանյան ռազմակայանի: Նշենք, որ Թուրքիայի ավանդական ագրեսիվությունը՝ ներկայումս ամրապնդված այդ երկրում իշխող կայսերական գաղափարախոսություններով եւ «մեկ ժողովուրդ՝ երեք երկիր» (նկատի ունենալով Թուրքիան, Ադրբեջանը եւ Հյուսիսային Կիպրոսը) կարգախոսով, տարածաշրջանի գլխավոր ապակայունացնող գործոնն է: Ըստ մեր դիտարկումների, ադրբեջանական ներկայիս ագրեսիվությունը զգալիորեն պայմանավորված է ԼՂՀ-ի նկատմամբ Թուրքիայի դիրքորոշմամբ: Հետաքրքրական է, որ ամերիկյան որոշ վերլուծաբանների (*տե՛ս, օրինակ, Ջորջ Ֆրիդման, Հաջորդ 100 տարիները, «Կոմերսանտ», 2010*) փոքր-ինչ ֆանտաստիկ կանխատեսումներով՝ սահմանը Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ ապագայում կարող է անցնել Հյուսիսային Կովկասով: Հայտնի է նաեւ, որ նման հարյուրամյա հեռանկար ունեցող կանխատեսումների հիմնական նպատակը այս կամ այն երկրում իշխող ռազմաքաղաքական ձգտումների վերհանումն է:

Այսինքն՝ կարելի է փաստել, որ ռուս-հայկական ռազմավարական/ դաշնակցային հարաբերություններն աշխատում են ոչ միայն ի նպաստ Չայաստանի: Դրանք ոչ միայն ապահովում են կայունությունը տարածաշրջանում, այլև ռուսաստանյան շահերի տեսանկյունից՝ խիստ կարելու են այն գործընթացների համատեքստում, որոնք ընթանում են բուն Ռուսաստանում, մասնավորապես, հյուսիսկովկասյան հանրապետություններում: Ակնհայտ է, որ Չայաստանն այն պատնեշն է, որը խոչընդոտում է արմատական կրոնական շարժումների եւ ահաբեկչական կազմակերպությունների տարածաշրջանային միասնական ճակատի ստեղծմանը, որոնք ցանկանում են պառակտել Ռուսաստանը: Ռուս-հայկական հարաբերությունները զսպման գործոն են հանդիսանում նաեւ Ադրբեջանի ու Վրաստանի համար, քանի որ այդ երկրներին ստիպում են Ռուսաստանի հանդեպ իրենց քաղաքականությունում հաշվի առնել «հայկական գործոնը»:

Երկու երկրների շահերի ընդհանրության բազմաթիվ օրինակներ կարելի է բերել, եւ այդ ոգով կատարված տարածաշրջանային վերլուծություններն առավել քան շատ են: Միաժամանակ, այս համատեքստում իմաստ ունի նաեւ ներկայացնել հայ-ռուսական հարաբերությունների այն հիմնախնդիրները, որոնք առկա են տեղեկատվական եւ մտավոր ոլորտներում: Դրանց անտեսումը կամ թերագնահատումը, ըստ մեզ, կարող է հանգեցնել լուրջ հետեւանքների արդեն ոչ հեռավոր ապագայում:

Վերլուծաբանների մոտ երբեմն այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունները հիմնականում պահպանվում են մեր նախագահների, որոշ քաղաքական գործիչների ու զինվորական ընտրանու ջանքերով, բայց ոչ մեր հասարակությունների կողմից: Չարաբերությունների այդ խնդիրը չպետք է դիտարկել զուտ ազգային հիշողության տեսանկյունից, որն ընդհանուր առմամբ դրական բնույթ է կրում: Բայց հիշողությունը սնունդ է առնում անցյալից եւ հետագա սերունդների մեջ այն կթուլանա, ըստ էության՝ արդեն թուլանում է: Չայտնի է, որ տեղեկատվական պատերազմների պայմաններում, երբ հիմնական խնդիրը սեփական քաղաքակրթական-մշակութային կոդի ներդրումն է թշնամու կամ բարեկամի հասարակությունում, փոխվում է ինքը՝ հասարակության կառուցվածքը եւ նրա բովանդակությունը. տեղի է ունենում պերմանենտ «ազգաշինություն» (nation building), եւ «ազգային հիշողության» տիպի կատեգորիաները երկրորդ պլան են նահանջում (դրանք կարող են ընդհանրապես անհետանալ, եթե անհրաժեշտ միջոցներ չձեռնարկվեն): Այս ամենը, մի փոքր պարզունակացված, մեկնաբանվում է որպես գլոբալացում, բայց իրականում արտահայտում է առանձին երկրների եւ կառույցների շահերի գերակայությունը:

Այս համատեքստում գաղտնիք չէ, որ հայ-ռուսական հարաբերությունները հաճախ մեկնաբանվում են այն ոգով, թե Ռուսաստանի համար Չայաստանը բեռ է, նրան առհասարակ պետք չէ Չարավային Կովկասը, իսկ Չայաստանի համար Ռուսաստանը տերություն է, որի նպատակը մեզ «ինքնիշխանությունից զրկելն է»: Առանձնահատուկ նշենք, որ նման մտքերը հնչեցնում են ամենեւին էլ ոչ պատահական անձինք, այլ միանգամայն պատրաստված փորձագետներ, վերլուծական կենտրոնների եւ ՉԿ-ների ներկայացուցիչներ: Խնդիրն այստեղ այն չէ, որ բոլորս պետք է մտածենք միակերպ. խնդիրն առավելապես դրդապատճառների հարթությունում է:

Այս առումով, շարունակելով վերլուծական կենտրոնների թեման՝ ընդգծենք, որ դրանք ազգային անվտանգության (ԱԱ) ինտելեկտուալ հիմքն են: Ավելին, տեղեկատվական դարաշրջանում ԱԱ գլխավոր չափանիշներից մեկը դառնում է հասարակության՝ օպտիմալ գաղափարախոսական միջավայր ձևավորելու եւ զարգացում ապահովելու կարողությունը: Անվտանգության հարցերը դիտարկելով նման մեթոդաբանությամբ՝ կարելի է գալ ոչ այնքան բարդ հետեւության. զարգացման գործընթացի (այսինքն՝ ԱԱ) հիմնական «պատասխանատուն», «կրիտիկական ենթակառուցվածքը» մարդն ու մարդկային հասարակությունն են: Ակնհայտ է, որ նման մոտեցման դեպքում վերլուծական կենտրոնները խորհրդանշում են զարգացման գործընթացը, այսինքն՝ ԱԱ-ն:

Օրինակ, The Think Tank Index-ի տվյալների համաձայն՝ ԱՄՆ-ում գործում են մոտ 1800 ուղեղային կենտրոններ (ՈւԿ), ինչը կազմում է աշխարհի բոլոր ՈւԿ-ների ավելի քան 30%-ը: Եթե ամերիկյան ՈւԿ համակարգին ավելացնենք նաեւ նրանց հետ սերտ համագործակցող բրիտանական 280 ՈւԿ-ները, ապա կարելի է խոսել այս ոլորտում անգլոսաքսոնյան գերիշխանության մասին: Այնինչ, Ռուսաստանում միայն 107 նման կառույց կա, իսկ Չայաստանում՝ 13, եւ հարցն այստեղ միայն թվաքանակը չէ:

Զխորանալով մանրամասների մեջ՝ նշենք, որ Ռուսաստանում եւ Չայաստանում ՈւԿ-ների այս քանակության զգալի մասը հիմնվել է օտարերկրյա կազմակերպությունների կողմից: Այնինչ, համաձայն դասական սահմանման, այդ կառույցները պետք է «արտադրեն ազգային շահեր», իսկ տվյալ պարագայում դրանք «արտադրում են այն երկրների ազգային շահերը», որտեղից ֆինանսավորվում են: Մասնավորապես, նման տիպի «ոչ ազգային» ՈւԿ-ներն են Արեւելյան Եվրոպայի (ուր մտնում է նաեւ Ռուսաստանը) համար կազմված վարկանիշերի առաջատարները:

Նման իրադրությունում կարծես թե ակնհայտ է, որ ՀՀ-ն եւ ՌԴ-ն, որպես դաշնակից երկրներ, իրենց ընդհանուր անվտանգության ամրապնդման նպատակով պետք է համակարգեն աշխատանքը ազգային ինտելեկտուալ ռեսուրսների հետ, որպեսզի «արտադրեն սեփական ազգային շահեր» եւ եղած մտավոր ռեսուրսներն ուղղորդեն կողմերի համար հրատապ խնդիրների լուծմանը: Մասնավորապես, ցանկալի է ձեւավորել համատեղ աշխատանքային խմբեր՝ կազմված փորձագետներից եւ իշխանական կառույցների ներկայացուցիչներից (որպեսզի արդյունքները հնարավոր լինի ներմուծել որոշումների ընդունման մեխանիզմ), որոնք կգործեն ազգային եւ տեղեկատվական անվտանգության ոլորտներում որոշակի նախագծերի մշակման եւ իրականացման ուղղությամբ: Հիմնախնդիրներն այդ բնագավառներում առավել քան շատ են, սակայն ներկայացնենք առավել հրատապ մշանակություն ունեցողներից երկուսը:

Փոխընդունելի իմիջների (կերպարների) ձեւավորում: Սա չափազանց հրատապ է, քանի որ Ռուսաստանում ներկայումս տարածված է հայի՝ «կովկասյան ազգության անձի», «մութ գործարքներ կատարողի» կերպարը, իսկ Հայաստանում ռուսի՝ «շովինիստի, ծայրահեղականի» կերպարը: Կարծում ենք, որ դաշնակիցների համար նման իմիջներն անհարիր են. ավելին, նման կերպարները տեղին են թշնամի ազգերի պարագայում:

Մինչդեռ իմիջի ձեւավորումը տեղեկատվական անվտանգության կարեւոր տարր է, եւ նման նախագծի մշակումը պահանջում է համակարգված աշխատանք ու միջոցիսցիալիկնար մոտեցում: Իսկ անհրաժեշտ իմիջի ձեւավորումը կմերձեցնի մեր հասարակություններն ու համագործակցության նոր հեռանկարներ կբացի բոլոր ոլորտներում: Եվ տեղեկատվական այս նախագծի համար կատարված ծախսերն անպայմանորեն կփոխհատուցվեն նաեւ նյութական առումով:

Հայ-ռուսական համատեղ ռազմավարության մշակում: ՀՀ եւ ՌԴ համագործակցությունը բարդ աշխարհաքաղաքական գործընթաց է, որն անհնար է իրականացնել առանց լավ մտածված ռազմավարության կամ, ըստ չինական տերմինաբանության՝ «ապագայի զավթման»: Իր հերթին արդիական ռազմավարության մշակումը ենթադրում է.

- Հայ-ռուսաստանյան հարաբերությունների անցյալի իմաստավորում (իսկ այնտեղ կան նաեւ հիմնախնդիրներ, որոնք մեր հասարակություններին պետք է ներկայացնել ողջամիտ մեկնաբանությամբ):

- Ներկա իրողությունների համարժեք իմաստավորում:

• Ապագայի առնվազն կարճաժամկետ եւ միջնաժամկետ կանխատեսումներ ու սցենարային մշակումներ. մեր պատկերացումներով ապագան տարածաշրջանում պարունակում է ինչպես մեծ ռիսկեր (նկատի ունենալով գլոբալ հարթությունում միջկրոնական հարաբերությունների սրացման ներկայիս միտումները), այնպես էլ մեծ հնարավորություններ (հաշվի առնելով հնարավոր համընթաց «ռազմաքաղաքական քամին») ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի համար:

Վերոնշյալ նախագծի եւ ռազմավարության մշակումը թույլ կտա.

• Գիտականորեն հիմնավորել եւ այդպիսով արդյունավետ բնույթ հաղորդել Ռուսաստանի ու Հայաստանի քաղաքականությանը տարածաշրջանում՝ վերջինիս տակ հասկանալով նաեւ Միջին եւ Մերձավոր Արեւելքի մի մասը:

• Ձեւավորել բարձրակարգ փորձագիտական հանրություն (հաշվի առնելով վերլուծաբանական եւ կանխատեսման հատուկ մեթոդների յուրացումն ու մշակումը) եւ այդպիսով ձեռք բերել արժեքավոր մարդկային կապիտալ. դա ինքնին կլինի զարգացման ռազմավարության դրսեւորում եւ այդպիսով կբարձրացնի Ռուսաստանի եւ Հայաստանի ԱԱ մակարդակը:

• Օգտագործել հետազոտական աշխատանքի արդյունքում ձեւավորված փորձագիտական հանրությունը նաեւ այլ ռազմաքաղաքական խնդիրների լուծման համար:

Եվ ամենագլխավոր արդյունքը. հայտնի է, որ ապագայի կանխատեսումներն ինչ-որ տեղ ձեւավորում են այդ նույն ապագան, այսինքն՝ նման աշխատանքների իրագործումը որոշակի իմաստով կարդարացնի «ապագան մեր ձեռքերում է» արտահայտությունը:

ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՈՒՐՔԻԱ.
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՄԻՏՈՒՄՆԵՐ
Ռուբեն Մելքոնյան

Թուրքիայի իշխանությունների կողմից Ցյուրիխյան արձանագրությունների տապալումը լուրջ հարված հասցրեց այդ երկրի միջազգային հեղինակությանը: Դրանից հետո թուրքական կողմը սկսեց ձեռնարկել իմիտացիոն բնույթի քայլեր, որոնք միտված են տպավորություն ստեղծելու, թե հայ-թուրքական գործընթացը շարունակվում է եւ Թուրքիան հավատարիմ է իր ստանձնած պարտավորություններին: Այդ քայլերը, հետզհետե ծավալվելով, սկսեցին էական տեղ զբաղեցնել Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ: Թուրք ամենատարբեր գործիչներ, հատկապես նախագահ Գյուլը եւ արտաքին գործերի նախարար Դավութօղլուն, շրջանառության մեջ դրեցին «լուռ դիվանագիտություն», «հասարակական դիվանագիտություն», «Ցյուրիխ-2» եւ այլ բառեր, որոնցով ցանկանում են բնութագրել հայ-թուրքական հարաբերությունների այսօրվա վիճակը:

Ի պատասխան թուրքական կողմի հավաստիացումներին, թե հայ-թուրքական գործընթացը չի դադարել եւ տարբեր ձեւերով շարունակվում է, Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության կողմից հնչեց բավական հստակ հայտարարություն, համաձայն որի՝ «լուռ դիվանագիտության» կամ «Ցյուրիխ-2»-ի մասին լուրերն իրականությանը չեն համապատասխանում:

Սակայն ակնհայտ է, որ թուրքական կողմը հակված է շարունակել իմիտացիոն քաղաքականությունը, եւ կարելի է ասել, որ այսօր նրանք առավելապես շեշտը դրել են «լուռ դիվանագիտություն», «հասարակական դիվանագիտություն» կոչված երեւույթների վրա: Սա, միեւնույն ժամանակ, նրանց մաներելու լայն դաշտ է ապահովում, քանի որ սակավ կոնկրետություն է պահանջում: Այդ համատեքստում պետք է դիտարկել վերջին շրջանում ակտիվացող հայ-թուրքական հասարակական տարատեսակ շփումները, կլոր սեղանների անցկացումը, սեմինարները, փոխայցելությունները, համատեղ ծրագրերը, որոնք խրախուսվում են դրամաշնորհ հատկացնող արտասահմանյան տարբեր կառույցների կողմից եւ շատ զրավիչ են տեղական «գրանտակեր» կազմակերպությունների համար: Միաժամանակ, Հայաստան են գործուղվում թուրքական տարբեր էմիսարներ, որոնք նպատակ ունեն թվացյալ ակտիվացում

մտցնել հայ-թուրքական գործընթացի մեջ եւ դրա համար երբեմն կիրառում են նաեւ էժանագին մեթոդներ:

Այդպիսի մի քարոզչական հնարք էր Չզոր Թուրքիա կոչված անհայտ կուսակցության՝ վերջերս տեղի ունեցած տարօրինակ քաղաքական «շնորհանդեսը»: Նախ թուրքական լրատվամիջոցներում տեղեկատվություն տարածվեց, թե ի նշան բողոքի, որ Հայաստան–Թուրքիա սահմանը փակ է, Չզոր Թուրքիա կուսակցության նախագահ Թունա Բեքլեւիչը եւ նրա տեղակալը Անիի ավերակների հատվածում յուրահատուկ ակցիա են արել՝ հատելով սահմանը: Այս լուրը շատ արագ տարածվեց նաեւ հայկական լրատվամիջոցներով¹ եւ հասարակական-քաղաքական շրջանակների քննարկման առիթ դարձավ: Եվ չնայած այն հանգամանքին, որ ռուսական սահմանապահները հերքեցին այդ լուրը, միեւնույն է՝ թուրքական քարոզչամեքենայի գցած խայծն արդեն աշխատել էր ու անհայտ կուսակցության երիտասարդ նախագահին ապահովել որոշակի ճանաչվածություն Հայաստանում եւ Թուրքիայում:

Նկատենք, որ Թուրքիայում պետական սահմանի անօրինական հատումը համարվում է հանցագործություն, սակայն Չզոր Թուրքիա կուսակցության այդ քայլին թուրքական իրավապահ մարմինները բացարձակ չարձագանքեցին՝ այդպիսով եւս մեկ անգամ ի ցույց դնելով այդ ամենի կազմակերպված եւ ուղղորդված լինելու հանգամանքը: Ըստ երեւույթին, Թունա Բեքլեւիչը թուրքական իշխանությունների թույլտվությամբ մոտեցել է Թուրքիայի կողմից սահմանի վերջնակետին, այնտեղ լուսանկարվել եւ այդպիսով ապահովել իր քարոզչական քայլի նախահիմքերը: Այս ամենից հետո կրկին թուրքական լրատվամիջոցները տեղեկություն տարածեցին, որ Թունա Բեքլեւիչը եւ նրա համախոհներն այցելելու են Հայաստան, այնտեղ կազմակերպելու են կոնֆերանս, մամլո ասուլիս եւ հնարավորության դեպքում՝ հանդիպելու են Հայաստանի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչների հետ, որպեսզի քննարկեն հայ-թուրքական հարաբերությունները:

Ակնհայտ է, որ ինչպես այս կուսակցության անվանումը, այնպես էլ ցանկությունները չափից ավելի հավակնոտ են: Ավելորդ չենք համարում նշել, որ Չզոր Թուրքիա կուսակցությունը ստեղծվել է 2006թ. եւ թուրքական քաղաքական դաշտում որեւէ ազդեցություն, հեղինակություն, կշիռ չունեցող կառույց է: 2007թ. խորհրդարանական ընտրություններին կուսակցությունը չի մասնակցել, միայն նրա նախագահ Թունա Բեքլեւիչն է առաջադրվել Էդիրնեում պատգամավորության թեկնածու եւ ստացել ընդամենը 643 ձայն: Հարկ է նկատել նաեւ, որ Բեքլեւիչի եւ նրա կուսակիցների տեսակետները սկզբունքային հարցերում համընկնում են

թուրքական պետական թեզերին: Մասնավորապես, ըստ նրանց՝ 1915-ին երկու կողմից էլ կորուստներ են եղել, ցեղասպանության խնդրին երրորդ երկրները չպետք է միջամտեն, այդ հարցը պետք է թողնել պատմաբաններին և այլն:

Ինչեւէ, Հայաստան – Թուրքիա սահմանը «հատելուց» հետո որոշակի ճանաչում ձեռք բերած կուսակցության նախագահը և փոխնախագահն այցելեցին Հայաստան, որպեսզի շարունակեն «բեմադրության» հաջորդ հատվածները: Մեր կարծիքով, հայաստանյան այցի հետ կապված՝ նրանք ունենին «պլան մաքսիմում» և «պլան մինիմում»: Առավելը, որին նրանք հավակնում էին՝ Երեւանում հայ-թուրքական հարաբերություններին նվիրված կոնֆերանսի հրավիրումը և Հայաստանի ԱԳՆ ներկայացուցիչների հետ հանդիպումն էր, որոնք տեղի չունեցան: «Պլան մաքսիմումի» տապալումից հետո նրանք իրականացրին «պլան մինիմումը», այն է՝ կարողացան հանդիպել հայաստանյան ՁԼՍ-ների հետ և իրենց գաղափարները որոշակիորեն տարածել հայկական մամուլում:

Այս ամենից որոշ ժամանակ անց կրկին թուրքական լրատվամիջոցներում հայտնվեց մի տեղեկատվություն, համաձայն որի՝ Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդը «Ազգային անվտանգության նոր քաղաքականության փաստաթղթում» Թուրքիայի համար սպառնալիք հանդիսացող երկրների ցանկից հանել է Վրաստանի, Սիրիայի, Բուլղարիայի և Հայաստանի անունները: Նախ նկատենք, որ այս քայլով թուրքական կողմը փորձ է անում ցույց տալ, թե իր ազգային անվտանգության նոր փաստաթուղթը համահունչ է Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր տեսլականին՝ «զրո խնդիր հարեւանների հետ» և, որպես դրա ապացույց մի քանի անմիջական հարեւան պետությունների անունները հանել է վտանգավոր համարվող երկրների ցուցակից: Եթե իրատեսորեն ենք մոտենում հարցին, ապա ներկայում Հայաստանը չի կարող դիտվել որպես լուրջ սպառնալիք Թուրքիայի համար և նրան այդ ցանկում ընդգրկելը կրում էր առավելապես քարոզչական բնույթ և միտված էր թուրքական հասարակության մեջ թշնամու կերպարը վառ պահելուն: Մյուս կողմից, չի կարելի բացառել, որ սա հերթական քայլն է, որով Թուրքիան ցանկանում է տարանջատել Հայաստանն ու հայկական սփյուռքը, և միգուցե հետագայում լինի պարզաբանում կամ տեղեկատվություն տարածվի, որ ոչ թե Հայաստան պետությունը, այլ հայկական սփյուռքն է սպառնալիք Թուրքիայի համար: Ի դեպ, Հայաստանի և Սփյուռքի տարանջատման խնդիրը վերջերս սկսել է լուրջ տեղ զբաղեցնել Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ, և դրա մասին բացահայտ արտահայտվել են վարչապետ Էրդողանն ու արտաքին գործերի նախարար Դավութօղլուն:

Սակայն թուրքիայի՝ պետական գաղտնիք հանդիսացող «Ազգային անվտանգության նոր քաղաքականության փաստաթղթի» որոշ դրույթների «գաղտնագերծումը» եւ տեղեկատվության «արտահոսքը», առավելապես, ունի քարոզչական գործառույթ: Կարելի է ենթադրել նաեւ, որ այս քայլը միտված է արտաքին լսարանին եւ կրկին մասն է կազմում թուրքական իմիտացիոն քաղաքականության, եւ շատ վերլուծաբանների կարծիքով՝ էական ազդեցություն չի ունենա Հայաստանի նկատմամբ թուրքիայի իրական քաղաքական տրամադրվածության վրա: Ավելորդ չենք համարում նշել, որ Հայաստանը թուրքիայի համար սպառնալիք ներկայացնող երկրների շարքից հանելու մասին լուրը ողջունող միակ թուրքական քաղաքական ուժը եղավ հենց Հզոր թուրքիա կուսակցությունը՝ հայտարարելով, որ դա տեղին արված քայլ է:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ թուրք էմիսարների այցերը եւ քարոզչական բնույթի քայլերը, ինչպես նաեւ զանազան տեղեկատվական արտահոսքերը միտված են լրացնելու եւ ամբողջացնելու թուրքական իմիտացիոն քաղաքականությունը: Մյուս կողմից, այս ամենը նպատակ է հետապնդում ցույց տալ, թե թուրքիայում կա «բազմակարծություն», եւ ծայրահեղ ազգայնամուլների կողքին կան նաեւ հավասարակշիռ գործիչներ: Կանխատեսելի է նաեւ, որ մանատիպ քայլերը շարունակվելու են եւ փորձ է արվելու այդ ամենը ներկայացնել նաեւ միջազգային տարբեր զեկույցներում՝ որպես հայ-թուրքական գործընթացի շարունակման ապացույց:

¹ Ավելորդ չենք համարում փաստել, որ թուրքիան լայնամասշտաբ տեղեկատվական-քարոզչական քայլեր է կատարում Հայաստանի եւ Հայության նկատմամբ, որի հաջողությանը նպաստում են նաեւ թուրքական ՋԼՄ-ներում առկա տեղեկությունների առանց ֆիլտրման թարգմանությունն ու տեղադրումը հայկական ՋԼՄ-ներում:

ԹՈՒՐՔԻԱ – ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Հայկ Գաբրիելյան

1999 թվականի դեկտեմբերի 10-ին Եվրախորհրդի (ԵԽ)՝ Հելսինկիում տեղի ունեցած գագաթաժողովում Թուրքիային շնորհվեց Եվրամիությանն (ԵՄ) անդամակցելու թեկնածու երկրի կարգավիճակ: Դրան նպաստեցին Հունաստանի հետ հարաբերությունների բարելավումը եւ 1998 թվականին Գերմանիայում Թուրքիայի հանդեպ բարյացակամ տրամադրված սոցիալ-դեմոկրատների իշխանության գալը:

Արդեն 2000 թվականի նոյեմբերին Եվրահանձնաժողովը (ԵՀ) Թուրքիայի համար պատրաստեց եւ 2001 թվականի մարտին հաստատեց «Անդամակցության գործընթացի ժամկետի մասին» փաստաթուղթը, ինչը ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ինքնատիպ «ճանապարհային քարտեզ» էր: Դրա արդյունքում Թուրքիան արդեն 2001 թվականի մարտին հրապարակեց «Ազգային ծրագրի ընդհանուր ռազմավարությունը»: Բյուլենթ Էջելիթի կոալիցիոն կառավարությունը պատրաստեց սահմանադրական բարեփոխումների 3 փաթեթ (դրանցից առաջինն ընդունվեց 2001 թվականի հոկտեմբերին, երկրորդը՝ 2002 թվականի մարտին, իսկ երրորդը՝ 2002 թվականի օգոստոսին) եւ փոփոխություններ իրականացրեց Քաղաքացիական օրենսգրքում:

2002 թվականի նոյեմբերին Թուրքիայում կայացած խորհրդարանական ընտրություններում համոզիչ հաղթանակից հետո Արդարություն եւ զարգացում կուսակցությունը (ԱԶԿ) իրականացրեց ԵՄ-ի կողմից պահանջվող 35 «գլուխներում» նշված մի շարք բարեփոխումներ: Դա պայմանավորված էր նաեւ նրանով, որ բարեփոխումների իրականացման հարցում համընկնում էին ԱԶԿ-ի ու ԵՄ-ի շահերը: Տվյալ ժամանակ (եւ հետագայում) ԵՄ-ի պահանջած բարեփոխումների իրագործումն ԱԶԿ-ին հնարավորություններ էր ընձեռում աստիճանաբար երկրի ներսում ամրապնդել սեփական դիրքերը եւ փոխարենը սահմանափակել իր հանդեպ ընդդիմադիր կեցվածք որդեգրած զինվորական ու դատական իշխանությունների ազդեցությունը: ԱԶԿ-ն քաջ գիտակցում էր, որ ԵՄ-ին անդամակցելու պարագայում Թուրքիայում գրեթե կբացառվի ռազմական հեղաշրջման տարբերակը, ինչը մշտապես արդիական է եղել:

Այդ բարեփոխումների շնորհիվ էլ 2004 թվականի դեկտեմբերին Բրյուսելում անցկացված ԵԽ համաժողովում միաձայն որոշվեց

Թուրքիայի հետ բանակցություններ սկսել 2005 թվականի հոկտեմբերի 3-ին: Այդ օրը ԵՄ անդամ երկրները, Լյուքսեմբուրգում երկարատև քննարկումներից հետո, ընդունեցին Թուրքիայի հետ բանակցություններ սկսելու որոշում: Այն ժամանակ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլա Գյուլը հայտարարեց, որ Թուրքիան հասցրեց նստել մեկնող գնացքը:

2010 թվականի սեպտեմբերին ԵՅ նախագահ ժոզե Մանուել Բարոզոն Նյու Յորքում հայտարարեց, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ճանապարհին ընկած ամենամեծ արգելքներից մեկը մշակութային տարբերությունն է: Դա մեծ դժգոհություն առաջացրեց Թուրքիայում, եւ թուրքական բազմաթիվ չինովնիկներ սկսեցին հանդես գալ ԵՄ-ին քննադատող հայտարարություններով:

ՄԱԿ Գլխավոր վեհաժողովի 65-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով Նյու Յորքում գտնվող Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլն անմիջապես հայտարարեց. «Եվրոպացի քաղաքական գործիչները հեռատես չեն: Չնայած ԵՄ-ին անդամակցելու ուղղությամբ Թուրքիայի գործադրած վիթխարի ջանքերին՝ ԵՄ-ը, դժբախտաբար, ժամանակ առ ժամանակ դանդաղեցնում է գործընթացը: Մենք չենք ասում մեխանիկորեն անդամակցենք ԵՄ-ին: Մենք ցանկանում ենք դա անել ԵՄ-ի ներկայացրած պայմաններն իրականացնելուց հետո: Սակայն անհրաժեշտ է, որ մեզ չխանգարեն այդ պայմաններն իրականացնելիս: Եվրոպան ուղղակիորեն խանգարում է մեր ինտեգրմանը»:

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանն իր հերթին հայտարարեց. «Գոյություն չունի մեկ այլ երկիր, որը 50 տարիների ընթացքում կանգնած լինի ԵՄ-ի դռների մոտ: Ցայժմ ես իմ եվրոպական գործընկերներից պարզաբանում չեմ ստացել տվյալ խնդրի շուրջ: Թուրքիան ո՞ր պարտավորությունները չի կատարել, եւ արդյո՞ք բոլոր պարտավորությունները կատարել են ԵՄ-ին անդամակցած երկրները: Առանց Թուրքիայի ԵՄ-ը քրիստոնեական խմբակ է»:

ԵՄ-ին քննադատելուց զերծ չմնաց նաեւ պետնախարար եւ փոխվարչապետ Ալի Բաբաջանը. «Գերմանիան եւ Ֆրանսիան ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելը դիտարկում են որպես սպառնալիք: Դրա պատճառն այն է, որ Գերմանիան ու Ֆրանսիան քաջ գիտակցում են, որ ԵՄ-ին Թուրքիայի լիիրավ անդամակցության պարագայում Թուրքիան այլեւս հանդես չի գա երկրորդական դիրքերից: Այդ ժամանակ բոլորն ականատես կլինեն ոչ թե Գերմանիա–Ֆրանսիա, այլ՝ Գերմանիա–Ֆրանսիա–Թուրքիա առանցքին: Մենք վստահ չենք՝ արդյո՞ք նրանք պատրաստ են մեզ հետ կիսել այդ հզորությունը»:

Այստեղ կարելի է համաձայնել Բաբաջանի հետ, քանի որ ԵՄ-ին անդամակցելու հարցում Թուրքիայի հակառակորդներն ընդգծում են, որ անդամակցության պարագայում Թուրքիան բնակչության թվաքանակով կդառնա Գերմանիայից հետո ԵՄ-ի անդամ երկրորդ խոշոր երկիրը: Իսկ դա նշանակում է, որ այն կարող է լրջորեն ներազդել եվրոպական քաղաքականության մշակման ու որոշումների ընդունման վրա:

2010 թվականի հոկտեմբերի 3-ին լրացավ անդամակցության շուրջ Թուրքիայի հետ ԵՄ-ի բանակցություններ սկսելու հնգամյակը: Այս կապակցությամբ պետնախարար եւ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցով գլխավոր բանազնաց Էգեմեն Բաղըշը հայտարարեց. «Մեր ժողովուրդն ականատես է լինում երկակի ստանդարտների կիրառման: Թուրքիայի ու ԵՄ-ի միջեւ գործող վիզային ռեժիմը Թուրքիան մեկուսացնում է ԵՄ-ից: Չնայած դրան՝ Թուրքիան այսօր էլ նույն խանդավառությամբ ու նպատակամղվածությամբ շարունակում է ԵՄ-ին ինտեգրվելու գործընթացը, սակայն կան այնպիսիները, որոնք ստուգում են Թուրքիայի համբերությունը: Մեր եվրոպական գործընկերներն ստիպված են որեւէ որոշում կայացնել: Ինչպես նշում է մեր վարչապետը, Թուրքիան այն երկիրը չէ, որին կարելի է կանգնեցնել շեմին: Թուրքիան աղքատ մուսուլմանական երկիր չէ. Թուրքիայում մեկ շնչին բաժին ընկնող ազգային եկամտի մակարդակը ԵՄ-ի անդամ որոշ երկրներից էլ բարձր է»:

Հոկտեմբերի 7-ին ԵՄ-ը Թուրքիային հիշեցրեց, որ պետք է պահպանել տված խոստումները եւ կիպրոսցիների առջև բացել 2006 թվականից փակված սեփական նավահանգիստները: Դա բավական զայրացրեց Էրդողանին. «Եթե մեզանից պատասխան եք ակնկալում, ապա զուր: Եթե մեզ չեք ցանկանում տեսնել ձեր շարքերում, ապա հենց այդպես էլ արտահայտվեք: Մեզ մի մոլորեցրեք: Մեզ մոլորեցնելու նպատակով անընդհատ ինչ-որ բանաձեւեր եք հորինում»:

Ներկայումս ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելու հարցում եվրոպական երկրներին պետք է բաժանել 3 խմբի. այդ գործընթացի կողմնակիցներ, հակառակորդներ եւ չկողմնորոշվածներ: Վերջիններիս մեջ է մտնում, օրինակ, Դանիան: Իսկ ահա ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության դեմ ամենաակտիվ հանդես եկող երկրներն են Գերմանիան, Ֆրանսիան, Կիպրոսը: Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելն ու Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին Թուրքիային, լիիրավ անդամակցության փոխարեն, առաջարկում են «արտոնյալ գործընկերություն», որի հեղինակն Անգելա Մերկելն է (2005): Սակայն Անկարան դա վիրավորական է համարում՝ նշելով, որ Թուրքիան արդեն իսկ արտոնյալ հարաբերու-

թյունների մեջ է գտնվում ԵՄ-ի հետ եւ որ իր համար, ԵՄ-ին լիիրավ անդամակցելուց բացի, գոյություն չունի որեւէ այլընտրանք: Ցայժմ անհայտ է մնում, թե Գերմանիան ու Ֆրանսիան ինչ նկատի ունեն «արտոնյալ գործընկերություն» ասելով:

Ակնհայտ է, որ Գերմանիան ու Ֆրանսիան ցանկանում են ԵՄ-ը վերածել քաղաքական լուրջ միության, որն ունակ կլինի մրցակցել ԱՄՆ-ի, ինչպես նաեւ Չինաստանի հետ: Բնականաբար, դա դուր չի գալիս ԱՄՆ-ին, որն էլ համառորեն ձգտում է մոտ 73 միլիոն մահմեդական բնակչություն ունեցող Թուրքիան ներառել քրիստոնեական Եվրոպայում՝ դրանով իսկ խաթարելով նրա միասնականությունը:

Բացի այդ, ԱՄՆ-ը դրանում է տեսնում Թուրքիայի իսլամականացման կանխման միակ ուղին՝ գտնելով, որ հակառակ դեպքում Թուրքիան կարող է դառնալ անկանխատեսելի եւ սպառնալիք ներկայացնել իր շահերին: Փաստորեն, ԱՄՆ-ը Թուրքիային արգելում է ծավալվել դեպի արեւելք եւ նրան ուղղում է դեպի արեւմուտք, ինչին էլ դեմ է հանդես գալիս ԵՄ-ը:

Ինչ վերաբերում է ԵՄ-ին անդամակցելու հարցում Թուրքիայի կողմնակիցներին, այստեղ առաջատարը Մեծ Բրիտանիան է, ապա գալիս են Իտալիան, Իսպանիան, Պորտուգալիան:

2010 թվականի սեպտեմբերի 30-ին Իտալիայի արտգործնախարար Ֆրանկո Ֆրատինին հայտարարեց, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելն՝ Արեւմուտքի ու իսլամական աշխարհի միջեւ հարաբերությունների կարգավորման տեսանկյունից կարող է ունենալ նույնպիսի խորհրդանշական կարեւորություն, ինչպիսին ժամանակին Գերմանիայի ու Ֆրանսիայի հաշտեցումն էր կամ Բեռլինյան պատի անկումը:

Այս հարցում Ֆրատինիի հետ համակարծիք է Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Քեմերոնը, որը 2010 թվականի հուլիսի 27-ին Անկարայում հայտարարեց, թե ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելը կնպաստի մահմեդական աշխարհի հետ ԵՄ-ի հարաբերությունների բարելավմանը: Բացի այդ, Քեմերոնը սուր քննադատության ենթարկեց այն երկրներին, որոնք ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելու հարցում գիտակցաբար իսլամատյացություն են առաջացնում: Ըստ Քեմերոնի՝ Թուրքիան չափավոր իսլամական երկիր է, եւ անհրաժեշտ է իսկական իսլամը տարբերել նրա ծայրահեղական տարբերակներից:

Քեմերոնը նաեւ ընդգծել է Թուրքիայի դերը՝ որպես ՆԱՏՕ անդամ. «Երբ ես պատկերացնում եմ, թե Թուրքիան՝ որպես ՆԱՏՕ անդամ, որքան շատ բան է արել Եվրոպայի պաշտպանության համար, եւ այն, ինչ հիմա է անում Աֆղանստանում՝ մեր եվրոպական դաշնակիցների հետ,

ապա զայրույթ են ապրում, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացը դանդաղեցվում է: Բավական չէ, որ ասում են Թուրքիան միայն պահպանում է ճամբարը, նա պետք է գտնվի վրանում»: Անկարայում Քեմերոնը հանձն առավ ստանձնել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելու գործընթացում «լավագույն փաստաբանի» դերը:

Այս ամենը նշանակում է, որ Մեծ Բրիտանիան ներկայումս փորձում է ԵՄ-ում Գերմանիայից ու Ֆրանսիայից խլել նախաձեռնությունն ու ազդեցությունը եւ, ի դեմս Թուրքիայի, հեռանկարում ստանալ հուսալի եւ բարյացակամ դաշնակցի: Դրա համար էլ պատահական չէ, որ հոկտեմբերի 24-ին Թուրքիան եւ Մեծ Բրիտանիան Ստամբուլում հուշագիր ստորագրեցին ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում փոխըմբռնման ու համագործակցության շուրջ, իսկ Մեծ Բրիտանիայի Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտը, որը հայտնի է «Chatham House» անունով, նոյեմբերի 9-ին տարվա քաղաքական գործչի մրցանակը հանձնեց Աբդուլա Գյուլին:

Հոկտեմբերի 22-ին անգլիական «The Economist» պարբերականում տպագրված ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության մասին հոդվածում Թուրքիան անվանված էր Եվրոպայի Չինաստան. «Սխալ են այն մեկնաբանությունները, թե ԵՄ-ը Թուրքիային չի ցանկանում տեսնել իր շարքերում, որովհետեւ այն իսլամական երկիր է: Նախկինում Թուրքիան Եվրոպայի հիվանդ մարդն էր, մինչդեռ այսօր նրա տնտեսությունը զարգանում է շատ արագ տեմպերով, ինֆլյացիան ցածր տոկոս է կազմում, թուրքական բանկերը մրցունակ են: Դրա համար էլ այն հնարավորություն ունի դառնալու ԵՄ-ի Չինաստանը»:

Ներկայումս թուրք քաղաքական գործիչներն ամեն պատեհ եւ անպատեհ առիթներով շարունակում են բարձրաձայնել ԵՄ-ին անդամակցելու խնդիրը: Սրա վառ օրինակն է նոյեմբերի 9-ին՝ Բեռլինյան պատի անկման 21-ամյա տարելիցի առիթով Էգեմեն Բաղըչի ելույթը. «Բեռլինյան պատի անկումը պատմության ընթացքում ամենակարեւոր խաղաղ նախագիծն է: Այն սկիզբ դրեց Եվրոպայի միավորման գործընթացին, ինչն էլ կավարտվի ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության պարագայում: Եվրոպան այսօր նոր պատերի կարիք չունի, ընդհակառակը՝ կամուրջների կարիք ունի: Մենք չենք ցանկանում Եվրոպային հարող մեր սահմանին ստանալ մի նոր Բեռլինյան պատ»: Հիշեցնենք, որ շուրջ մեկ տարի առաջ Աբդուլա Գյուլը ԵՄ-ին մեղադրել էր իր արեւելյան սահմանին մի նոր Բեռլինյան պատի ստեղծման մեջ:

Նույն օրը Բրյուսելում հրապարակվեց ԵՄ ընդլայնման գործընթացի վերաբերյալ տարեկան զեկույցը: ԵՄ ընդլայնման գծով վերակոմիսար

Շտեֆան Ֆյուլեն հայտարարեց. «ԵՄ-ը դժգոհ է նրանից, թե ինչպես է Թուրքիան կատարում իր պահանջները»:

Թուրքիայի մասին 13-րդ զեկույցում ԵՄ-ը նշել է, որ Թուրքիան կատարել է 35 «զլուխներից» միայն մեկը, քայլեր է ձեռնարկել 13-ի ուղղությամբ եւ անուշադրության է մատնել մնացած 21-ը:

Արտաքին քաղաքականության ոլորտում ԵՄ-ը մատնացույց է արել Թուրքիայում աճող հակախորայելական տրամադրություններն ու կիպրական խնդիրը: ԵՄ-ը ընդգծել է, որ Թուրքիան չի կատարում իր խոստումները եւ իր նավահանգիստներն ու օդանավակայանները չի բացում Կիպրոսի առջեւ:

Բացի այդ, ԵՄ-ը 2011 թվականի համար մի շարք «տնային առաջադրանքներ» է հանձնարարել Թուրքիային. շարունակել սահմանադրական բարեփոխումները, երաշխավորել խոսքի ու խղճի ազատությունը, ազատ եւ բաց քննարկումներ կազմակերպել այնպիսի զգայուն թեմաների առնչությամբ, ինչպիսիք են հայկական եւ քրդական հարցերը, ստեղծել իրավական մեխանիզմներ ալեւիների եւ ոչ մուսուլմանների խնդիրների լուծման համար, վերացնել քաղաքական կյանքի, կրթության եւ հասարակական ծառայությունների ոլորտներում միայն թուրքերենի գործածումը եւ այլն:

ԵՄ-ի հրապարակած զեկույցին անմիջապես արձագանքեց թուրքական կողմը: Բաղըշը հայտարարեց. «Սա ամենալավ զեկույցն է՝ նախորդ զեկույցների համեմատ: Հսկայական տարբերություն կա 13 տարի առաջվա առաջին եւ ներկայիս զեկույցներում ԵՄ-ի նշած Թուրքիայի պատկերների միջեւ: Արդեն մեր քթերով սկսում ենք զգալ ԵՄ-ին անդամակցելու հոտը: Իսկ դա նշանակում է, որ մենք ստիպված չենք լինի սպասել եւս 13 տարի»:

Արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն իր հերթին նշեց. «Զեկույցում կան կետեր, որոնց հետ մենք համաձայն ենք, սակայն կետեր էլ կան, որոնց հետ համաձայն չենք: Մեծապես կարելորում են, որ ԵՄ-ը դրականորեն է գնահատել սահմանադրական բարեփոխումները եւ նոր քաղաքացիական սահմանադրություն ունենալու Թուրքիայի պահանջը: Համաձայն են, որ Թուրքիան պետք է արագացնի բարեփոխումների գործընթացը: Շատ կարելոր է նաեւ այն, որ ԵՄ-ը ողջունում է մեր ակտիվ արտաքին քաղաքականությունը: Սակայն զեկույցում մեզ ամենաշատը հիասթափեցրել է կիպրական խնդրի շուրջ ԵՄ-ի մոտեցումը, քանի որ թե՛ Թուրքիան, թե՛ Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը «շատ ճկուն» քաղաքականություն են վարում այս հարցում»:

Ինչ վերաբերում է Էրդողանին, ապա նա հայտարարեց, որ թուրքերն

իսկապես հոգնել են շուրջ 50 տարի շարունակ ԵՄ-ի դարպասների առջև կանգնելուց եւ ԵՄ-ի կողմից Թուրքիայի հանդեպ խաղի կանոնների փոխվելուց, իսկ Աբդուլա Գյուլն էլ ավելի առաջ գնաց՝ նշելով. «Այսօր ուժերի միջազգային տեղաբաշխումն իրականացվում է հօգուտ Արեւելքի, եւ Թուրքիան իր տնտեսական բարեփոխումների շնորհիվ հնարավորություն կստանա միանալու «BRIC»-ի երկրներին (Բրազիլիա, Ռուսաստան, Չինաստան, Հինաստան)»:

Նոյեմբերի 10-ին անգլիական «Financial Times» թերթն անդրադարձավ գեկույցին. «Վաղ, թե ուշ ԵՄ-ն ու Թուրքիան բանակցությունների համար այլեւս քննարկման թեմա չեն ունենա: ԵՄ-ը անընդհատ տարբեր պատճառաբանություններով ձգձգում է գործընթացը եւ խոչընդոտներ հարուցում Թուրքիայի անդամակցությանը: ԵՄ-ը հույսը դրել է նրա վրա, որ թուրքական հասարակությունում աստիճանաբար կմարի ԵՄ-ին անդամակցելու շուրջ խանդավառությունը, եւ աստիճանաբար կնվազի ԵՄ-ին անդամակցելու կողմնակիցների թվաքանակը: Այն աստիճանաբար տալիս է իր պտուղները: Ցայժմ ԵՄ-ը, երբ իր անդամակցության շուրջ բանակցություններ է սկսել եվրոպական որեւէ երկրի հետ, ապա ընդհանրապես չի մերժել ոչ մի երկրի: Իսկ դա նշանակում է, որ եթե Թուրքիայի անդամակցությունը մերժվի, ապա Թուրքիան կհանդիսանա ԵՄ-ի կողմից առաջին մերժված երկիրը»:

Այսպիսով, ԵՄ-ին անդամակցելու հարցում Թուրքիան շատ դժվարին ու երկարատեւ ճանապարհ ունի անցնելու: Որոշ կանխատեսումներով, հազիվ թե Թուրքիային հաջողվի դա անել մինչեւ 2023 թվականը (Թուրքիայի Հանրապետության հիմնադրման հարյուրամյակը), երբ Էրդողանի կանխատեսամբ՝ Թուրքիան արդեն տեղ զբաղեցրած կլինի տնտեսական առումով աշխարհի առաջատար 10 երկրների շարքում:

ԻՐԱՆ. ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

ՍԵՆԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Միջուկային հիմնախնդիրը

Հոկտեմբերի 17-ին Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադը հայտարարեց, որ Թեհրանը պատրաստ է վերսկսել միջուկային հիմնախնդիրն վերաբերող բանակցությունները «վեցնյակի» հետ: Սա Իրանի՝ բանակցությունները վերսկսելու պատրաստակամության մասին առաջին հայտարարությունն էր 2010-ի հունիսից հետո, երբ Թեհրանը հայտարարեց, որ խզում է բանակցությունները «վեցնյակի» հետ՝ վերջինի անօրինական պահվածքի համար (խոսքը վերաբերում է Իրանի դեմ պատժամիջոցների կիրառմանը): Իրանի նախագահի հոկտեմբերի 17-ի հայտարարությունը նաև պահանջներ էր ներկայացնում «վեցնյակին», որոնց կատարումից հետո Թեհրանը կվերադառնա բանակցային ձեռնարկին:

1. Բանակցությունները պետք է հիմնված լինեն ԱԵՄԳ սկզբունքների վրա:

2. Արեւմուտքը պետք է հստակ ձեւակերպի՝ բանակցություններից ինչ է ակնկալում. բարեկամություն, թե՞ թշնամանք:

3. «Վեցնյակը» պետք է որոշի՝ բանակցություններում դրական արդյունքի՞ հասնել, թե՞ հերթական հայտարարություններն անել բանակցությունների տապալման մասին:

4. «Վեցնյակը» պետք է պաշտոնական տեսակետ արտահայտի Իսրայելի միջուկային զինանոցի վերաբերյալ եւ հստակ հայտարարի, թե ինչպես է վերաբերվում դրան:

Չնայած այս կետերը, որոնք հնչեցվել են Իրանի նախագահի կողմից, հիմնականում քարոզչական բնույթի հայտարարություններ են, սակայն 4-րդ կետը, մեր կարծիքով, հատուկ ուշադրության է արժանի: Ակնհայտ է, որ «վեցնյակն» Իսրայելի միջուկային սպառազինության մասին որեւէ հայտարարություն չի անի, քանի որ՝ ա) դա իր լիազորությունների մեջ չէ, բ) Իսրայելի միջուկային ծրագիրը եզակի դեպքերում է դառնում միջազգային քննարկման առարկա: Սակայն Իրանի նախագահի հայտարարության ուշագրավությունն այն է, որ նա Իրանի միջուկային ծրագրի շուրջ բանակցությունների թեման նույնացրեց Իսրայելի միջուկային

սպառազինության խնդրի հետ, չնայած, ըստ թեհրանի, իր միջուկային ծրագիրը միայն խաղաղ նպատակներ ունի:

Ինչ վերաբերում է բուն առաջարկին՝ վերսկսել բանակցությունները, ապա այն արժանացավ վեցնյակի» դրական արձագանքին: Նոյեմբերի 1-ին ՌԴ ԱԳՆ նախարար Ս.Լավրովը հայտարարեց, որ Ռուսաստանը կողմ է բանակցությունների վերսկսմանը եւ հույս ունի, որ դրանք տեղի կունենան նոյեմբերի կեսերին: Նույնպիսի հայտարարությամբ հանդես եկան Գերմանիայի եւ Չինաստանի արտգործնախարարությունները: Հարկ է նշել, որ Միացյալ Նահանգներն արդեն սեպտեմբերից ակտիվորեն պատրաստվում է բանակցությունների արդյունքում Իրանի հետագա մեկուսացմանը: Հարավարեւելյան Ասիայի պետությունների ասոցիացիայի՝ հոկտեմբերի 30–31-ին հանդիման կայացած գագաթաժողովին մասնակցած ԱՄՆ պետքարտուղար Հ.Բլինթոնը բանակցություններ է վարել Չինաստանի ղեկավարության հետ՝ կապված Չինաստանի իրանական քաղաքականության հետ: Ինչպես նշում են մի շարք աղբյուրներ, ԱՄՆ պետքարտուղարին հիմնականում անհանգստացնում է այն հարցը, թե արդյոք չինական ընկերությունները կզբաղեցնեն Իրանից հեռացող եվրոպական ընկերությունների տեղը: Նման նախադրյալներ արդեն իսկ ստեղծվել էին օգոստոս–սեպտեմբերին, երբ մի շարք ֆրանսիական տեխնոլոգիական ընկերություններ փակել են իրենց ներկայացուցչությունները Թեհրանում: Դրանից հետո նրանց տեղն արագ զբաղեցրել են չինական ընկերությունները, ինչի արդյունքում ստացվել է այնպես, որ Պեկինը ՄԱԿ ԱԽ պատժամիջոցներն օգտագործում է իրանական շուկան գրավելու նպատակով:

Հարկ է նշել, որ ԵՄ-ում քիչ չեն կարծիքները, թե Իրանի դեմ ԵՄ եւ առանձին եվրոպական պետությունների կողմից լրացուցիչ պատժամիջոցների կիրառման մասին որոշումները լուրջ սխալ էին, քանի որ դրանք կանաչ լույս են վառում չինական եւ հնդկական ընկերությունների առջև՝ գրավելու մեծ դժվարությամբ եվրոպացիների կողմից վերջին 20 տարիներին Իրանում զբաղեցրած դիրքերը: ԵՄ-ի համար սա կարելուր խնդիր է, որն առաջին հերթին վերաբերում է էներգետիկ անվտանգությանը, քանի որ չինական ներկայության ամրապնդումն Իրանում հետագայում կարող է հանգեցնել իրանական գազի Չինաստան արտահանմանը, ինչն ավելի կբարդացնի «Նաբուկկո» գազատարի կառուցումը: Հիմնականում գերմանական կառավարության ճնշման պատճառով «RWE» գերմանական գազային հսկա ընկերությունը կասեցրեց իր մասնակցությունը «Նաբուկկո» ծրագրին, քանի որ, ինչպես նշում են գերմանական մամուլում, ընկերությունը պատրաստ չէ առճակատման գնալ գերմանական իշխող կուսակցության հետ:

Ինչ վերաբերում է Իրան–«վեցնյակ» բանակցություններին, ապա դրանք, հավանաբար, կվերսկսվեն նոյեմբերի կեսերին եւ կանցկացվեն Թուրքիայում:

Տարածաշրջանային քաղաքականություն

Վերջին շրջանում Իրանը բավական կարելոր տեղ է զբաղեցնում տարածաշրջանային զարգացումներում՝ ակնհայտ դարձնելով սեփական դիրքերի ամրապնդման փաստը:

Հոկտեմբերի 24-ին, ամերիկյան մամուլում հրապարակված տեղեկությունների մեկնաբանության նպատակով, Աֆղանստանի նախագահ Յ.Քարզայը մամլո ասուլիսի ժամանակ պաշտոնապես հաստատեց, որ կանխիկ գումար է ստացել իրանական կառավարությունից: Խոսքն իրանցիների կողմից աֆղանական բանակի Գլխավոր շտաբի ղեկավարին գումար տրամադրելու մասին է: Աֆղանստանի նախագահը հայտարարեց. «Այո, նրանք մեզ պայուսակներով գումար են տալիս: Այո, դա փաստ է: Եվ մենք շնորհակալ ենք իրանցիներին դրա համար: Իսկ հայրենասիրությունը գին ունի»: Գին ասելով Քարզայն, ամենայն հավանականությամբ, նկատի ուներ սեփական սպայակազմին խրախուսելը, որպեսզի նրանք չանցնեն «Թալիբանի» կողմը եւ պաշտպանեն սահմանադրական կարգը: Նման հայտարարությունը ուշագրավ է երկու հիմնական պատճառով.

1. Աֆղանստանի իշխանությունները պաշտոնապես ընդունում են Իրանի իշխանությունների հետ սերտ համագործակցության փաստը եւ ցույց տալիս, թե որքան փխրուն են Աֆղանստանի հիմնական դոմոր Միացյալ Նահանգների դիրքերն այս երկրում, եթե երկրի ղեկավարությունը համագործակցում է Վաշինգտոնի տարածաշրջանային հիմնական մրցակցի եւ հակառակորդի հետ:

2. Փաստորեն, Աֆղանստանի անվտանգության երաշխիք հանդիսացող բանակն իրականում նման է վարձկանների միավորման, որը զուտ ֆինանսական նկատառումներից ելնելով է իրականացնում սեփական պարտականությունները: Հատկանշական է, որ Քարզայը նաեւ ընդունեց, որ իրանական գումարի մի մասը ծախսվել է «մասնավոր անվտանգության ընկերություններին վճարելու նպատակով», քանի որ բանակն արդեն ի վիճակի չէ ինքնուրույն վերահսկել իրավիճակը երկրում:

Այս փաստը, Իրաքում բռնության սաստկացմանը զուգընթաց, ցույց է տալիս ամերիկյան տարածաշրջանային քաղաքականության տապալումը: Ամենայն հավանականությամբ, Իրաքում եւ Աֆղանստանում դրությունը դուրս է եկել «վերահսկվող քաոսի» տրամաբանությունից:

Վերահսկել իրադրությունը տարածաշրջանում Վաշինգտոնն, ամենայն հավանականությամբ, չի կարող:

Ի դեպ, հոկտեմբերի 30-ին Իրանի ԱԳՆ խոսնակը, արձագանքելով Աֆղանստանի նախագահի խոսքերին՝ հայտարարեց, որ Թեհրանը երբեք չի ժխտել «Աֆղանստանի անվտանգության ապահովման մեջ իրականացվող ներդրումները», ինչն ավելի տեսանելի է դարձնում Թեհրանի ամրապնդվող դիրքերը տարածաշրջանում:

Այս առումով, բացառված չէ, որ «վեցնյակի» հետ բանակցությունները նպաստավոր հող ստեղծեն իրանա-ամերիկյան բանակցությունների վերսկսման համար, քանզի ակնհայտ է, որ Վաշինգտոնն այլևս չի կարող ինքնուրույն լուծել Իրաքում եւ Աֆղանստանում առաջացած խնդիրները:

Իրանն ինքն էլ է շահագրգռված ամերիկացիների հետ բանակցությունների վերսկսմամբ, քանի որ իրաքյան գործընթացները լուրջ սպառնալիք են ստեղծում Թեհրանի համար: Խոսքն, առաջին հերթին, «Ալ-Ղաիդայի» ակտիվացման մասին է: Վերջինս սկսել է ավելի ակտիվ գործել Իրաքի՝ իրանական ազդեցության տակ գտնվող շիական հարավում, որտեղ իրականացվել են իրանական եւ արեւմտյան լուրջ ներդրումներ: Այստեղից են արդյունահանում իրաքյան նավթի 90 տոկոսը: Համաձայն իսլամիստական կայքերից մեկում հրապարակված «Ալ-Ղաիդայի» հայտարարության, որն արտատպվեց իրանական եւ արեւմտյան տեղեկատվական գործակալությունների կողմից, իսլամիստները նոր հարվածներ են հասցնելու Բասրայում եւ Ամարում գործող ընկերություններին ու ձեռնարկություններին: Հայտարարությունում նշվում է, որ այդ միջոցով «Ալ-Ղաիդան» «կկոտրի Բաղդադի շիական իշխանությունների ողնաշարը, քանի որ նավթի վաճառքից ստացվող գումարները կառավարության արյունն են, զինամթերքի գնման աղբյուրը եւ բանակին ու ոստիկանությանը վճարվող գումարները»:

Ակնհայտ է, որ նման իրավիճակը լուրջ վտանգ է ներկայացնում թե՛ իրանցիների, թե՛ ամերիկացիների համար: Ներկայումս Բաղդադում իշխող շիական կառավարությունը եւ քրդական ավելի քան կիսանկախ տարածաշրջանն ապահովում են կայունությունն Իրաքում, ինչպես նաեւ իրանական եւ ամերիկյան շահերի պաշտպանությունը: Ստեղծված ստատուս քվոյի խախտումը կարող է բարդացնել կյանքը եւ Թեհրանի, եւ Վաշինգտոնի համար: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ը եւ Իրանը ստիպված պետք է վերսկսեն համագործակցությունն՝ իրաքյան գործընթացներն ավելի կառավարելի դարձնելու համար: Հավանաբար, երկու կողմերից եւ ոչ մեկն այս համագործակցությունից «մաքուր հաղթող» դուրս չի գա, եւ հնարավոր ձեռքբերումները կլինեն փոխշահավետ:

ԹՈՒՐՔԻԱ – ՉԻՆԱՍՏԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտաշես Տեր-Յարությունյան

Նոյեմբերի 8–14-ը Թուրքիայում ընթացան թուրք-չինական ցամաքային ուժերի համատեղ զորավարություններ: Թեև զորավարությունների մասշտաբն այնքան էլ մեծ չէր (այն ընթացավ հատուկ նշանակության ջոկատների մակարդակով, լեռնային տեղամբում եւ ուներ հակաահաբեկչական գործողություններ մշակելու նպատակ), սակայն Պեկինի ու Անկարայի միջեւ նման աննախադեպ ռազմական փոխգործակցության մեկնարկն անմիջապես գրավեց դիտորդների ուշադրությունը:

Ավելի վաղ՝ սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 6-ը, Թուրքիայում չինական օդուժի Су-27 եւ Миг-29 մեկ տասնյակը չգերազանցող ռազմական ինքնաթիռները, թուրքական օդուժի հետ միասին, պատմության մեջ առաջին անգամ անցկացրին համատեղ զորավարություններ: Դրանք, ի դեպ, ընթացան Միացյալ Նահանգների ու ՆԱՏՕ-ի օդուժի համար անչափ կարեւորվող Կոնիայի ավիաբազայում եւ արժանացան պաշտոնական Վաշինգտոնի քննադատությամբ:

Ուլղուրական հարցի պատճառով 2009թ. երեւան եկած թուրք-չինական լարվածության ֆոնին՝ այդ զորավարություններն, անշուշտ, վկայում են, որ հակասությունները Պեկինի ու Անկարայի միջեւ ոչ միայն հաղթահարվել են, այլև Թուրքիան ու Չինաստանը փորձում են նոր մակարդակի բարձրացնել իրենց հարաբերությունները:

Սակայն հարցն այդքանով չի փակվում: Պեկինն ու Անկարան ունեն շատ կարեւոր մի նմանություն. երկուսն էլ, դուրս գալով տեւական ժամանակ ձգված աշխարհաքաղաքական թմբիրից, ներկայում ձեռնամուխ են եղել արտաքին ակտիվ քաղաքականության իրականացմանը՝ նպատակ ունենալով աշխարհում (Չինաստանի պարագայում) եւ հարակից տարածաշրջաններում (Թուրքիայի պարագայում) ընդլայնել սեփական ազդեցությունը: Եթե նման ծրագրեր ու կարողություններ ունեցող երկրները սկսում են հարաբերություններ զարգացնել ռազմավարական նշանակություն ունեցող ռազմաքաղաքական ոլորտում, ապա ավելի հավանական է, որ նրանց նպատակները չսահմանափակվեն միայն երկկողմ ձեւաչափով:

Իրավիճակային դիտարկում

Պաշտոնական հարաբերությունները Չինաստանի ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ սկսվեցին 1971թ. օգոստոսի 5-ից, երբ Անկարան պաշտոնապես ճանաչեց ՉԺՀ-ն: Մինչ օրս Թուրքիան հավատարիմ է մնում, այսպես կոչված, «մեկ Չինաստանի» քաղաքականությանը, ըստ որի՝ Անկարան ՉԺՀ-ն ճանաչում է որպես Չինաստանի միակ օրինական ներկայացուցիչ¹:

Թուրք-չինական հարաբերությունները կտրուկ սրվեցին անցած տարի ամռանը, երբ 2009թ. հուլիսի 5-ին Չինաստանի արեւելքում ընկած Մինցցյան-Ուլղուրական Ինքնավար Շրջանի վարչական կենտրոն Ուրումչիում տեղի ունեցան ուլղուրների բողոքի զանգվածային ակցիաներ, որոնք վերաճեցին բախումների: Արդյունքում, ըստ պաշտոնական տվյալների, սպանվեց 184 հոգի, վիրավորվեց մոտ հազարը: Ուրումչիում տեղի ունեցած դեպքերին բավական կտրուկ արձագանքեցին Թուրքիայում: Այդ երկրի առեւտրի ու արդյունաբերության նախարար Նիհաթ Էրզուրը կոչ արեց թուրք սպառողներին բոյկոտել չինական ապրանքները: Վարչապետ Էրդողանն ավելի հեռուն գնաց. նախ սպառնաց ուլղուրական հարցը դարձնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի քննարկման առարկա, ապա խոստացավ մուտքի վիզա տրամադրել ուլղուրների անկախության համար պայքարող Ուլղուրների համաշխարհային կոնգրեսի առաջնորդ Ռեբիյա Կադիրի², եթե նա ցանկանա այցելել Թուրքիա, եւ վերջապես՝ 2009թ. հուլիսի 10-ի հեռուստատեսության ժամանակ Ուրումչիում տեղի ունեցածը կոչեց «ցեղասպանություն»: Ի պատասխան՝ Չինաստանի փոխարտգործնախարար Ժայ Ջունը Էրդողանի հայտարարությունը բնորոշեց որպես «անպատասխանատու»:

Այդպիսի վիճակում, սակայն, թուրք-չինական հարաբերությունները երկար չմնացին: Պատճառներից մեկը համաշխարհային տնտեսական ճգնաժամն էր: Վերջինիս հետեւանքով թուրքական արտահանման համար ավանդական հանդիսացող շատ կարեւոր շուկաներ՝ եվրոպական, ռուսական, ամերիկյան, սկսեցին կրճատվել, իսկ չինականն այն սակավաթիվ տնտեսություններից էր, որ անգամ ճգնաժամի ամիսներին աճում էր եւ այժմ էլ շարունակում է աճել: Դա իր ազդեցությունն ունեցավ Անկարայում:

Այսօր Թուրքիայի համար Չինաստանը խոշոր առեւտրային գործընկեր է: Թուրքիայի վիճակագրական ինստիտուտի հրապարակած վերջին՝ 2010թ. առաջին ինն ամիսներն ընդգրկող, տվյալների համաձայն, ներկայում Պեկինը Անկարայի երրորդ խոշոր առեւտրային գործընկերն է

(Գերմանիայից եւ Ռուսաստանից հետո) եւ երկրորդը՝ միայն ներմուծման գծով:

Թուրք-չինական նոր հարաբերությունների մասին հնարավոր եղավ խոսել Չինաստանի վարչապետ Վեն ժիաբաոյի Թուրքիա կատարած այցելության արդյունքում: Հոկտեմբերի 8-ին Անկարայում երդողան-ժիաբաո բանակցություններից եւ թուրք-չինական ութ պայմանագրերի ստորագրումից հետո, հայտարարվեց, թե երկու երկրներն անցնում են «ռազմավարական համագործակցության հարաբերությունների», ինչը նշանակում է «քաղաքական հարաբերությունների խորացում եւ երկկողմ առևտրատնտեսական կապերի ընդլայնում»: Նշվեց, թե նպատակ կա երկկողմ առևտուրը 2015թ. հասցնել \$50 մլրդ-ի, իսկ 2020թ.՝ \$100 մլրդ-ի:

Հետևություններ

Թուրքիայի հետ նոր հարաբերություններ զարգացնելով՝ Չինաստանը փորձում է լուծել մի քանի խնդիր:

Նախ նշենք ուլդուրական հարցը: Անվտանգության ոլորտում Անկարայի հետ կապերը խորացնելով՝ Պեկինը նպատակ ունի ի ցույց դնել, որ Թուրքիան այլևս չի սատարում ուլդուրական շարժմանը: Այդ հարցը կարելի է համարվում Չինաստանում, քանի որ 2008թ. մարտին Տիբեթում տեղի ունեցած հուզումներից հետո, Պեկինում չեն ցանկանում նմանատիպ իրավիճակ ունենալ նաեւ հարեւան նահանգում, ինչը Չինաստանի վրա լրացուցիչ միջազգային ճնշման հնարավորություն է ստեղծում:

Անկարայի հետ «ռազմավարական համագործակցության հարաբերությունները» Պեկինի համար, ըստ ամենայնի, ձեռք են բերում կարելիոր աշխարհաքաղաքական նշանակություն: Արեւմտյան աղբյուրներն առանձնացնում են այն, որ դեպի Թուրքիա ուղեւորվելիս՝ չինական օդուժի ինքնաթիռներն անցան Պակիստանով ու Իրանով՝ երկու երկրներում էլ կանգնելով ու համալրելով վառելիքի պաշարները, ինչն աննախադեպ «էքսպեդիցիա» էր Չինաստանի բանակի համար: Այստեղ կարելի է երկու հանգամանք: Առաջին. նման քայլով Պեկինն ի ցույց է դնում Եվրասիայում ռազմական տեղաշարժեր կատարելու իր հնարավորությունները, ինչը Չինաստանի կողմից հերթական քայլն է՝ ցամաքային ճանապարհով, ուր ամերիկյան ռազմուժի կարողություններն ավելի փոքր են, մուտք ապահովել դեպի չինական տնտեսության համար անհրաժեշտ ռեսուրսների աղբյուրներ եւ շուկաներ: Երկրորդ. թե՛ Պակիստանը եւ թե՛ հատկապես Իրանը, ուր չինական ռազմական ինքնաթիռներն առաջին անգամ էին վայրէջք կատարում, աչքի չեն ընկնում ԱՄՆ-ի ու նրա

դաշնակիցների հետ ջերմ հարաբերություններով: Հաշվի առնելով այս, ինչպես եւ՝ վերջին շրջանում ամերիկա-թուրքական ռազմաքաղաքական հարաբերություններում շարունակվող տարածայնությունները՝ արեւմտյան դիտորդները նշում են, որ չինական օդուժի նշված էքսպեդիցիան կարելի է ընկալել որպես Պեկինի փորձը՝ հասնել Պակիստանով, Իրանով ու Թուրքիայով ձգվող աշխարհաքաղաքական որոշակի գծի ստեղծմանը՝ մասնավորապես՝ որ նախորդ տարիներին վերջին երեք երկրների միջև հարաբերությունները միայն լավացել են:

Մյուս կողմից, Չինաստանի այս նախաձեռնությունը պետք է դիտարկել հատկապես միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո աշխարհում իր ազդեցությունն ընդլայնելու միտված Պեկինի արտաքին քաղաքական քայլերի համատեքստում: Պատահական չէ, որ Չինաստանի վարչապետի այցելությունը Թուրքիա եւ ձեռք բերված պայմանավորվածությունները ժամանակային առումով գրեթե համընկան Պեկինի արտաքին քաղաքական այլ ուշագրավ ու որոշ դեպքերում՝ աննախադեպ նախաձեռնությունների հետ: Այսպես՝ հոկտեմբերի 2-ին, գտնվելով Աթենքում, Չինաստանի վարչապետը խոստացավ Հունաստանին գնել վերջինիս պետական պարտատոմսերը, ինչը շոշափելի աջակցություն կլինի ծանր վիճակում գտնվող հունական տնտեսության համար: Նոյեմբերի 6-ին տնտեսական վատ օրեր ապրող Պորտուգալիային նույնպիսի խոստում տվեց Լիսաբոնում գտնվող Չինաստանի նախագահ Հու Չինտան: Ավելի շուտ՝ նոյեմբերի 4-ին, Փարիզում Չինտանի եւ Սարկոզիի ներկայությամբ ստորագրվեցին \$22.8 մլրդ ընդհանուր արժողությամբ չին-ֆրանսիական առևտրատնտեսական մի քանի պայմանագրեր: Իսկ նոյեմբերի 9-ին՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Քեմերոնի Չինաստան կատարած այցի ընթացքում ստորագրվեց \$1.2 մլրդ-ի հասնող մի գործարք, ըստ որի՝ բրիտանական Rolls-Royce ընկերությունը չինական China Eastern Airlines ավիաընկերության Airbus 330 տեսակի 16 ինքնաթիռների համար շարժիչներ է պատրաստելու: Հասկանալի է, թե տնտեսական լավ վիճակում չգտնվող եվրոպական տնտեսությունների համար Պեկինի ձեռնարկած այդ քայլերը որքան կարեւոր են:

Թուրքիայի պարագայում Չինաստանի հետ նման պայմանավորվածությունների կայացումը կարող է ունենալ առնվազն երկու պատճառ:

Առաջին. առանձնանում է այն հանգամանքը, որ Պեկինի հետ նման «ճեղքում» Անկարան կատարում է նոյեմբերի 19-20-ը Լիսաբոնում նախատեսված ՆԱՏՕ հերթական գագաթաժողովի նախօրեին: Թուրքամերիկյան շարունակվող ռազմաքաղաքական տարածայնությունների ֆոնին՝ Անկարայի այս նախաձեռնությունն ամերիկյան ու եվրոպական

փորձագիտական հանրությունների կողմից ընկալվեց որպես Արեւմուտքից հեռանալու հերթական քայլ: Այդ առումով, կարծես թե որպես լրացում եղավ նոյեմբերի 9-ին Եվրահանձնաժողովի հրապարակած ԵՄ-ին անդամակցության ճանապարհին Թուրքիայի առաջընթացի վերաբերյալ հերթական զեկույցը, ըստ որի՝ Անկարան դեռ պատրաստ չէ անդամակցել ԵՄ-ին: Ձեկույցը բացասական բուռն արձագանք գտավ Անկարայում:

Երկրորդ. ուշադրություն է գրավում այն, որ անգամ Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական համագործակցությունում (դարձյալ՝ որպես Արեւմուտքին այլընտրանք) Անկարան ու Մոսկվան չեն հասել կամ դեռ չեն հասել այն կետին, ինչը թույլ կտա իրականացնել, օրինակ, նման կարգի զորավարություններ: Հնարավոր է, որ այստեղ իրենց դերն ունեն նաեւ երկու երկրների միջեւ առկա հայտնի հակասությունները, որոնք չկան թուրք-չինական հարաբերություններում:

Նշվածը թույլ է տալիս ենթադրել, որ թուրք-չինական «ռազմավարական համագործակցության» բարեհաջող զարգացման դեպքում Պեկինը կարող է, առաջ անցնելով Մոսկվայից, Անկարայի համար դառնալ ԱՄՆ-ին ու ՆԱՏՕ-ին այլընտրանք հանդիսացող ռազմաքաղաքական գործընկեր: Այդ իմաստով ուշագրավ է իսրայելական աղբյուրների մատուցած տեղեկությունը, ըստ որի՝ հոկտեմբերի 11-ին Դամասկոսում Սիրիայի նախագահ Բաշար Ասադի եւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի միջեւ կայացած հանդիպման ընթացքում քննարկվել է Չինաստանի հետ ռազմական ու հետախուզական ոլորտներում համագործակցության հարցը, որը կներառի Թուրքիան, Սիրիան ու Իրանը: Արդեն նոյեմբերի 8-ին Դամասկոսում Ասադն ընդունեց Չինաստանի Կենտրոնական ռազմական հանձնաժողովի³ փոխնախագահ Հու Չայիուին, որի ժամանակ քննարկվեցին երկկողմ ռազմական կապերը:

¹ Հայտնի է, որ միջազգային ասպարեզում Չինաստանի Հանրապետությունը (ՉՀ) կամ Թայվանը Չինաստանի ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) հետ վիճարկում է աշխարհում Չինաստանն օրինական կերպով ներկայացնելու իրավունքը:

² Ռեբիյա Կադիրը բնակվում է ԱՄՆ-ում: Ինչպես Դալայ-լամայի, այնպես էլ տիկին Կադիրի պարագայում Չինաստանի կառավարությունը հետեւողական է, որ նրա այցելությունները տարբեր երկրներ արգելվեն: 2006թ. եւ 2007թ. Թուրքիան հրաժարվել էր մուտքի վիզա տրամադրել Ուլդուրների համաշխարհային կոնգրեսի առաջնորդին:

³ Հանձնաժողովը Չինաստանի Կոմկուսի մասը հանդիսացող մարմին է, որը իրականացնում է զինված ուժերի վերահսկողությունը:

ԻՍԼԱՄԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ԱԼԻՔ ՅՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Արաքս Փաշայան

Հյուսիսային Կովկասը Ռուսաստանի ամենախլամականացված շրջաններից է, որն աչքի է ընկնում բազմէթնիկ եւ բազմադավան խճանկարով, ավանդական հասարակություններով, որտեղ բնակվում է Ռուսաստանի իսլամադավան բնակչության մոտ քառասուն տոկոսը: Հատկանշական է, որ Հյուսիսային Կովկասում հասարակության բարոյական, սոցիալական եւ էթիկական կողմերը, նաեւ՝ առանձին իրավական ասպեկտներ, կանոնակարգվում են տեղական կովկասյան ավանդույթների (ադաթ) եւ իսլամի միջոցով:

ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանի համար Հյուսիսային Կովկասը դարձավ թերեւս ամենախնդրահարույց, դժվարամարս եւ պայթյունավտանգ շրջաններից մեկը: Այդպես է եղել թե՛ Ռուսական կայսրության եւ թե՛ խորհրդային տարիներին: Ռուս-չեչենական վերջին պատերազմից ավելի քան տասը տարի է անցել, սակայն իրավիճակը Հյուսիսային Կովկասում չի կայունացել:

Անկայունությունը հյուսիսկովկասյան հանրապետություններում (հիմնականում Դաղստանում, Չեչնիայում, Ինգուշեթիայում, ավելի քիչ՝ Կարաչաեւո-Չերքեզիայում, Կաբարդինո-Բալկարիայում) կապվում է իսլամիստական շարժումների հետ, որն իր անդրադարձներն է գտնում ոչ միայն տարածաշրջանում, այլեւ՝ Մոսկվայում, առհասարակ՝ Ռուսաստանի տարբեր, այդ թվում՝ մուսուլմանական շրջաններում:

Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող խորքային գործընթացների մեջ հանգուցային նշանակություն միշտ ունեցել է եւ ունի իսլամը, որը տեղական ինքնության եւ աշխարհընկալման ամենակարեւոր բաղադրիչներից մեկն է: Իսլամական լանդշաֆտն այստեղ երեք հիմնական բաղկացուցիչ ունի՝ *սուննիզմ*, *սուֆիզմ* եւ *սալաֆիզմ* (կամ՝ *վահաբիզմ*), որոնցից յուրաքանչյուրն ունի իր ճյուղավորումները, էթնիկ եւ սոցիալական թիրախային խմբերը:

Բացի իշխանությունների եւ իսլամիստների միջեւ ներկայիս առճակատումից, որն առանձին հետազոտողների կարծիքով վերածել է *լատենտ քաղաքացիական պատերազմի*, խորքային հակասություններ կան նաեւ ներիսլամական դաշտում՝ միջդավանական հարաբերություններում:

Իսլամական տարբեր ուղղությունների, հիմնականում՝ հյուսիսկովկասյան իսլամի եւ վահաբիզմի միջեւ սկիզբ առած հակամարտությունը երբեմն սուր շեշտադրումներ է ձեռք բերում: Կողմերը միմյանց մեղադրում են հերետիկոսության եւ հավատքից նահանջելու մեջ: Նրանցից յուրաքանչ-յուրը ձգտում է առաջնահերթություն ձեռք բերել ազդեցության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ կովկասյան լեռնականների ինքնությունը վերածելու հարցում: Վահաբականների դեմ հատկապես անզիջում պայքար են մղում սուֆիական շեյխերը: Վերջիններիս մեջ հանգուցային նշանակություն ունի Ացաեւ Սեյիդ-էֆենդի Ալ-Չիրքավին (Չերկեսկի), որը մեծ թվով համախոհներ ունի Դաղստանի կառավարության եւ իրավապահ մարմինների շրջանում: Վահաբիզմի դեմ բացահայտ պատերազմ է հայտարարել Չեչնիայի նախագահ Ռամզան Կադիրովը, որի հռետորականության մեջ զգալի սուֆիական շեշտադրումներ կան:

Իսլամական ինքնարտահայտման վերոնշյալ ձևերն ուղղակի կամ անուղղակի կապ ունեն քաղաքական գործընթացի հետ եւ նպաստում են հասարակական տրամադրությունների ձեւավորմանը եւ քաղաքական ուղենիշների բյուրեղացմանը: Եթե իսլամի նշված առաջին երկու ուղղությունները (սուննիական եւ սուֆիական) Յյուսիսային Կովկասի համար ավանդական են, ապա սալաֆիական իսլամը տարածաշրջանի համար նոր իրողություն է:

Այն Յյուսիսային Կովկաս է ներթափանցել 1990-ականների սկզբներին, հիմնականում արտաքին միջամտության եւ ֆինանսավորման շնորհիվ՝ մասնավորապես Չեչնիայում դառնալով հակառուսական պայքարի եւ ազգային-անկախական շարժման գաղափարախոսական հենքը: Ժամանակի ընթացքում սալաֆիականությանը հաջողվեց ամրապնդել դիրքերը հասարակության մեջ՝ վերաճելով քաղաքական եւ կրոնական ընդդիմադիր լուրջ շարժման, որը ցանկացած պահի կարող է փոխել խաղի կանոնները: Եթե ռուս-չեչենական պատերազմների շրջանում իսլամիզը Յյուսիսային Կովկասում ասոցիացվում էր աֆղանական եւ արաբական միսիոներության եւ միջազգային քիհադական շարժումների հետ, ապա այսօր այն վերաճել է տեղական իրողության, որը դրսից աջակցության բացակայության պայմաններում էլ կարող է շարունակել գործել նույն եռանդով:

Յյուսիսային Կովկասն իսլամիստների համար «Կովկասի էմիրություն» է՝ իր «վիլայեթներով», որն իսլամական աշխարհի եւ ունմայի բաղկացուցիչն է: Այս վիրտուալ պետության առաջնորդը իսլամիստական շարժման անենահայտնի դեմքերից մեկն է՝ Դոքու Ումարովը, որն իրեն հռչակել է Կովկասի մոջահիդների էմիր:

Իսլամիստներն ամենակոշտ մեթոդներով պայքարում են հասարակության մեջ իսլամական սկզբունքների բացարձակացման եւ շարիաթական պետության ստեղծման համար: Նրանք պահանջում են խստորեն հետեւել կրոնական ծիսակարգին՝ հատկապես օրական հինգ անգամ կատարվող աղոթքին, սննդային արգելքներին, իսլամական բարոյականության չափորոշիչներին: Իսլամիստների թիրախ են դառնում ալկոհոլային խմիչք վաճառողները, կրոնական ատրիբուտիկային չհետեւող կանայք, այդ թվում նրանք, ովքեր լողազգեստով հայտնվում են հասարակական լողափերում, բախտագուշակները եւ այլն: Որոշակի «հաջողությունների» նրանք հասել են Ինգուլշեթիայում, որտեղ ալկոհոլային խմիչք այլեւս չի վաճառվում, իսկ կանայք եւ աղջիկները հիմնականում հիջաբ են կրում: Վերջին շրջանում Մախաչկալայում իսլամիստների կողմից պայթեցվել են ալկոհոլ վաճառող մոտ երկու տասնյակ խանութներ եւ սրճարաններ: Արդյունքում՝ խանութների սեփականատերերի մոտ կեսը հրաժարվել է ալկոհոլ վաճառել:

Բացի այդ, սովորական են դարձել հարձակումներն իմամների վրա: Այդ գործընթացը խթանվեց 2006-ից ի վեր, երբ «Կաբարդինո-Բալկարիա վիլայեթի» էմիր Անգոր Աստեմիրովը (էմիր Սեյֆուլլահ) սպառնաց, որ եթե պաշտոնական իմամները չընդունեն սալաֆիականություն, կոչնչացվեն: Դրանից հետո իմամների դեմ ահաբեկչությունները սաստկացան: Առանձին տվյալների համաձայն՝ վերջին մի քանի տարիների ընթացքում Յյուսիսային Կովկասում վահաբականների կողմից սպանվել են 60 հոգեւորականներ եւ նրանց ընտանիքի անդամներ¹: Հատկանշական է, որ մահացած իմամներից շատերին որեւէ մեկը չի համարձակվում փոխարինել՝ չցանկանալով վտանգել սեփական կյանքը:

Առանձին հետազոտողների կարծիքով՝ այն, որ Յյուսիսային Կովկասում իրավիճակն անկայուն է եւ պայթյունավտանգ, կապված է ոչ միայն իսլամիզմի հետ. կան նաեւ այլ պատճառներ՝ պայմանավորված սոցիալական, տնտեսական, քաղաքական խնդիրներով, նաեւ՝ մեծ չափերի հասնող գործազրկությամբ: Պատահական չէ, որ իսլամիստական շարժման անդամակցում են մեծ թվով երիտասարդներ: Մարդիկ հիասաթափված են իշխանություններից, նրանց անգործությունից, կոշտ մեթոդներից, որոնք հիմնականում հակառակ ազդեցությունն են ունենում: Միեւնույն ժամանակ, հասարակության մեջ կան նաեւ զգալի շերտեր, որոնք դեմ են իսլամական պետության ստեղծմանը կամ Մոսկվայի հետ հարաբերությունների վատացմանը՝ հաշվի առնելով չեչենական ծախողված փորձը եւ հնարավոր քաոսի ստեղծումը:

Իսլամի գծով հեղինակավոր մասնագետ Ալեքսեյ Մալաշենկոյի

կարծիքով՝ Մոսկվան չի կարողանում մշակել արդյունավետ ռազմավարություն՝ Յյուսիսային Կովկասը դուրս բերելու ճգնաժամից, եւ քանի դեռ Յյուսիսային Կովկասը չի մոդեռնիզացվել, առաջիկայում փոփոխության մասին խոսք լինել չի կարող:

Ավելին, ռուսաստանյան դաշնային օրենքները Յյուսիսային Կովկասում առանձին դեպքերում չեն գործում, այլ կերպ ասած՝ գործում են մասնակի, եւ մարդիկ շատ դեպքերում ստիպված են օգտագործել միակ պահպանված եւ կենսունակ համակարգը՝ շարիաթը, որի հեղինակությունն աստիճանաբար աճում է: Տարեցտարի ավելանում են մզկիթները, որոնք հասարակական-քաղաքական յուրօրինակ ակունքների նշանակություն ունեն, ընդլայնվում է կրոնական գործառույթը, մեծանում է այն մարդկանց թիվը, ովքեր ցանկանում են ձեռք բերել ուխտավորի (*հաջջի*) պատվավոր տիտղոսը՝ մեկնելով Մեքքա եւ իսլամական այլ սրբատեղիներ:

Հատկանշական է, որ առանձին ոլորտներում շարիաթով առաջնորդվելու (օրինակ՝ խմիչքի վաճառքն արգելելու, սննդային արգելքներ ներդնելու եւ այլն) օգտին այսօր հանդես են գալիս ոչ միայն պաշտոնական իսլամի ներկայացուցիչները, այլեւ՝ Մոսկվային լոյալ տեղական էլիտաները: Շատ դեպքերում իշխանությունները դիմում են իսլամական հռետորականությանը: Ասվածի ապացույցն է Չեչնիայի նախագահ Ռ.Կադիրովի դիտարկումն այն մասին, որ մզկիթը քաղաքական կյանքի կենտրոն է:

Եթե նախկինում հօգուտ շարիաթի ներդրման հանդես եկող իսլամիստներին Մոսկվան փշերով էր ընդունում, այժմ կա այն գիտակցությունը, որ առանց շարիաթի կամ առանց իսլամի Յյուսիսային Կովկասը կառավարել հնարավոր չէ: Այսօր Յյուսիսային Կովկասում կան բազմաթիվ բնակավայրեր, որտեղ մարդիկ, առանց ավելորդ աղմուկի, ապրում են շարիաթի նորմերով, դրա օրենքներով եւ կարգավորում ընտանեկան, համայնքային, քաղաքացիական վեճերը: Շարիաթականացման միտումը ներկայումս հստակ է Դաղստանում եւ Չեչնիայում, իսկ բազմակնությունն այլեւս իրողություն է:

Հատկանշական է, որ Յյուսիսային Կովկասի բոլոր հանրապետություններում գործում է իսլամական կրթական համակարգ: Մասնավորապես, Դաղստանում այն առավել զարգացած է: Դեռեւս 2000թ. վերջերին այս հանրապետությունում գործում էին 13 իսլամական համալսարաններ (որոնցից վեցը՝ պետական լիցենզավորմամբ), միջազգային իսլամական բուհերի 33 մասնաճյուղեր, 136 մեդրեսե (միջնակարգ կրոնական դպրոց) եւ այլն: Մախաչկալայում է գտնվում Յյուսիսային Կովկասի ամենամեծ՝

Իման Շաֆիի իսլամական համալսարանը: Բացի այդ, ամեն տարի Չյուսիսային Կովկասից բազմաթիվ ուսանողներ մեկնում են Միջին Արևելքի տարբեր կենտրոններ՝ իսլամական կրթություն ստանալու նպատակով: Չետագայում նրանք վերադառնում են հայրենիք՝ ավելի արմատական տրամադրություններով:

Նշենք, որ Չյուսիսային Կովկասում իրավիճակի կայունացման հարցը թե՛ ռուսաստանյան քաղաքական շրջանակների, թե՛ փորձագիտական հանրության ուշադրության կենտրոնում է: Այս կապակցությամբ հետաքրքիր է Ա.Մալաշենկոյի դիտարկումը: Նրա կարծիքով՝ առանց իսլամիստների հետ երկխոսության Չյուսիսային Կովկասում խաղաղության հասնել հնարավոր չէ: Միեւնույն ժամանակ, կրոնական հեղձի վրա նույնպես անհրաժեշտ է հասնել կոնսենսուսի՝ հավասարապես բաժանելով ազդեցության ոլորտները: Սխալ է բոլոր սալաֆիականներին վարկաբեկել, մարգինալացնել, ահաբեկիչ կամ բանդիտ անվանել: Բազմադարյան փորձը ցույց է տալիս, որ ահաբեկչությունը քաղաքական պայքարի մի մասն է, որը բնորոշ է տարածաշրջանին: Քանի դեռ տեղական ոստիկանությունները եւ Անվտանգության դաշնային ծառայությունը հետապնդում են վահաբականներին, որոնց շարքերում շատ են խորքային հավատացյալները, պատերազմը չի դադարելու:

Փաստորեն, Չյուսիսային Կովկասում ներկայումս սկիզբ է առել իսլամականացման նոր ալիք: Եթե իսլամի առաջին ալիքն ավելի շատ վերաբերում էր իսլամական արժեքների եւ մշակույթի զարթոնքին, ապա իսլամականացման նոր ալիքն այլևս կապված է իսլամի քաղաքականացման հետ: Իսկ շարիաթականացման միտումն այդ ուղղությամբ կատարվող առաջին քայլն է:

¹ Ամենաաղմկահարույցը 2009-ին հակավահաբական տրամադրություններով հայտնի երկու հեղինակավոր եւ բարձրաստիճան աստվածաբանների՝ Դադստանի փոխմուֆտի Ահմադ Թաղաեւի եւ Կարաչաեւո-Չերքեզիայի փոխմուֆտի Իսմայիլ Բոստանովի սպանություններն էին:

ԵՎՐՈՊԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՈՂԵԼԻ ՃԳՆԱԺԱՄԸ

Սուրեն Սարյան

Ինչպես նշում են մի շարք փորձագետներ, ներկայում Եվրոպային, ինչպես եւ ողջ Արեւմուտքին (ներառյալ Ամերիկյան եւ Ռուսաստանը) սպասում է անկայունության մի վտանգավոր շրջան, որն ուղեկցվում է սոցիալական ապակայունացմամբ, քանի որ լայն զանգվածներն այլեւս զրկվում են սոցիալական բարիքներից օգտվելու հնարավորություններից: Որպես ճգնաժամից ելք՝ առաջարկվում է անցնել խնայողության ռեժիմի, որը ենթադրում է արտոնությունների կրճատում, անվճար ծառայությունների նվազեցում, թոշակային տարիքի ավելացում:

Վերջին ամիսների զանգվածային սոցիալական բողոքները Ֆրանսիայում, որոնք երբեմն վերածվում էին բռնի գործողությունների՝ փաստացիորեն կաթվածահար անելով երկիրը, կարծես թե վերոնշյալի մասին են վկայում:

Առաջին հայացքից այսօր Ֆրանսիայում ծավալվող իրադարձությունները նման են 1968թ. ուսանողական հուզումներին: Այդ ժամանակ ակնհայտ էր, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մայրցամաքում հաստատված հասարակարգն այլեւս ի վիճակի չէ բավարարել հետպատերազմյան սերունդների պահանջները: 1968 թվականը բերեց Եվրոպայում քաղաքական ու սոցիալական նոր մոդելի հաստատմանը՝ քաղաքական կյանքում քաղաքացիների ընդլայնված մասնակցությամբ եւ սոցիալական բարիքների վերաբաշխմամբ:

Այսօր Եվրոպան համակած ճգնաժամն արդեն վերաբերում է գործող մոդելի անկենսունակությանը:

Շուրջ հիսուն տարի Եվրոպան ապրում էր տնտեսական վերելքի եւ կյանքի որակի ու մակարդակի մշտական բարելավման ժամանակաշրջան: Պետք է հաշվի առնել, որ հետպատերազմյան Եվրոպայի հզորության վերելքի գործոններն էին. ա/ պատերազմից մնացած հիշողությունները, որոնցով ղեկավարվում էին առաջնորդների նախորդ սերունդները, բ/ խորհրդային սպառնալիքի առկայությունն ու ամերիկյան աջակցությունը, որոնք համախմբում էին Եվրոպացիներին եւ ապահովում մայրցամաքի անվտանգությունը, գ/ Գերմանիայի ձգտումը՝ ռեաբիլիտացնել իրեն Եվրոպացիների առջև եւ ապահովել հարեւանների աջակցությունը երկրի վերամիավորման գործում, դ/ Ֆրանսիայի

ծգտունը՝ առաջնորդել Եվրոպան: Այսօր այդ գործոնները կան չկան, կան բավական թույլ են:

Ասպարեզ են եկել այլ գործոններ: Մայրցամաքի երկրներում ժողովրդագրական փոփոխությունները, որոնք ուղեկցվում են կյանքի տևողության շարունակական աճի ու ծնելիության անկման միտումներով, ծանրացնում են սոցիալական բեռը բոլոր աշխատողների համար: Մինչդեռ, այսօր վերելք ապրող Ասիայի երկրները չունեն ոչ բնակչության թվաքանակի պակաս, ոչ ծախսատար սոցիալական ապահովության համակարգեր, ինչի շնորհիվ ձեռք են բերում էական առավելություններ Եվրոպայի համեմատ: Արդյունքում՝ եվրոպական երկրների տնտեսություններն այսօր այլևս համաշխարհային առաջին երեք տնտեսությունների շարքում չեն՝ իրենց տեղերը զիջելով ԱՄՆ-ին, Չինաստանին եւ ճապոնիային:

Եիշտ է, Եվրոպական միությունը մնում է աշխարհի խոշորագույն տնտեսությունը, դեռ տիրապետում է կոշտ ու մեղմ ուժի զանազան միջոցների, սակայն միտումներն այսօր աշխատում են Եվրոպայի դեմ:

Արդեն 2009թ. դեկտեմբերին Կոպենհագենում կայացած գլոբալ կլիմայական հարցերով համաշխարհային զագաթաժողովի ժամանակ գլխավոր հիմնահարցերը քննարկվում էին ԱՄՆ-ի, Չինաստանի, Յնդկաստանի, Հարավային Աֆրիկայի եւ Բրազիլիայի միջեւ, մինչդեռ ո՛չ ԵՄ-ը, ո՛չ էլ որեւէ եվրոպական տերություն բանակցությունների սեմյակում չէր գտնվում: Այս իրողությունը դարձավ ահազանգ Եվրոպայի համար՝ իր առաջատար դիրքերի կորստի առումով:

Մինչդեռ Եվրոպան ունի հզոր մտավոր ներուժ, որի օգտագործումը կարող է ապահովել Եվրոպայի տեղը XXI դարի առաջատար հասարակություններում: Սակայն դրա համար անհրաժեշտ է սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական պետության մոդելի վերիմաստավորում, որը գործում էր մի քանի տասնամյակ:

Փորձագետներն այն կարծիքին են, որ ամբողջ Եվրոպան կանգնած է նոր, դրամատիկական փոփոխություններով հղի փուլի շեմին, որը պետք է դուրս բերի մայրցամաքը զարգացման բոլորովին նոր մակարդակի:

Ամեն դեպքում, Եվրոպան պետք է պատրաստ լինի անխուսափելի փոփոխությունների, որոնք ենթադրում են կենսամակարդակի զգալի անկում: Դրան զուգահեռ՝ մեծանում է վաղվա օրվա նկատմամբ եվրոպացիների անվստահությունը, զգացում, որը նրանք չեն ունեցել առնվազն 1960-ականներից ի վեր:

Կարգավորիչ մեխանիզմներն այլևս չեն գործում: Եվրոպական

երկրների արժեքային համակարգն այսօր համարվում է ոչ համարժեք ժամանակի մարտահրավերներին: Հենց դրա նկատմամբ գրեթե թշնամական վերաբերմունքն է պայմանավորում երիտասարդության ներգրավումը փողոցային հուզումների մեջ: Ֆրանսիայի նախագահ Սարկոզին ինքը վերջերս խոստովանեց, որ եվրոպայում առկա արժեքային եւ ֆինանսական համակարգերը սպառել են իրենց:

Տնտեսական, ֆինանսական, սոցիալական ճգնաժամի հետեւում կանգնած է խոր մտավոր եւ հոգեւոր ճգնաժամ, որը կասկածի է ենթարկում եվրոպական ժողովուրդների կողմնորոշիչները:

Երիտասարդության փողոց դուրս գալը վկայությունն է, որ սկսվել է եվրոպական կամ արեւմտյան զարգացման ուղու ճգնաժամը: Պարզվեց, որ եվրոպական զարգացման ուղուն այլընտրանքներ կան՝ ի դեմս ասիական զարգացող հասարակությունների: Տնտեսական գլոբալացումը բերեց նրան, որ չինացի աշխատավորն ավելի մրցունակ է, քան ֆրանսիացի աշխատավորը:

Դրան ավելանում է նաեւ երիտասարդության լուրջ մտահոգությունն իր ապագայի նկատմամբ: Իսկ Շտուտգարտում անկարգությունները դարձան Գերմանիայի ժամանակակից պատմության մեջ ոստիկանության հետ ամենախոշոր բախումները:

Որպեսզի համոզեն իրենց ժողովուրդներին՝ հրաժարվել արտոնություններից եւ գնալ ինքնասահմանափակումների, եվրոպական էլիտաները պետք է վայելեն վստահություն եւ բարոյական հեղինակություն: Սակայն նման էլիտաներ այսօր դեռեւս չեն նշմարվում:

Եվրոպական քաղաքների փողոցներ դուրս եկած ցուցարարները մեղադրում են իրենց քաղաքական ու գործարար վերնախավերին երկակի ստանդարտների մեջ, երբ հասարակ մարդկանց ստիպում են ձգել գոտիները, իսկ նույն վերնախավի ներկայացուցիչներն այդ զրկանքները եւ պատասխանատվությունը կրելու պատրաստակամություն չեն ցուցաբերում:

Գրեթե բոլոր եվրոպական երկրներում առկա է լիդերության ճգնաժամ: Այսօրվա եվրոպական լիդերներն ի վիճակի չեն ոգեւորել իրենց ազգերին եւ առաջարկել ոչ ստանդարտ լուծումներ՝ վատթարացող իրավիճակի վերաբերյալ:

Արդեն Հունաստանի պարագայում ակնհայտ դարձավ, որ եվրոպական քաղաքական էլիտան ունակ չէ համարժեք պատասխան եւ լուծումներ գտնել առաջ եկած հիմնախնդիրներին: Ինչպես նշում է եվրոպացի հայտնի մտածողներից մեկը՝ Ժակ Ատալին, նկատի ունենալով եվրոպական կառույցների անարդյունավետությունը, «այն, ինչ կատարվում

է այսօր, պարզապես փողերի շռայլ վատնում է: Մենք դեռեւս գործ ունենք քաղաքական գործիչների հետ, որոնք XX դարի մարդիկ են եւ ուշանում են մի ամբողջ հարյուրամյակ»: Ատալին նաեւ շեշտում է, որ ճգնաժամը նոր է սկսվում, եւ վատթարագույն սցենարներից խուսափելու համար Եվրոպան պետք է արթնացնի իր քաղաքական դասին:

Եվրոպան կանգնած է լրջագույն երկրնտրանքի առաջ. կամ մրցունակության կորուստ, կամ աշխատավորների իրավունքների, այլ կերպ ասած՝ մարդու իրավունքների սահմանափակում: Իսկ մարդու իրավունքները Եվրոպայի համար դարձել էին նոր կրոն: Այս տեսանկյունից, ԵՄ-ի ու Եվրոպական առանցքային պետությունների քաղաքականությունը՝ հաստատել մարդու իրավունքների գերակայությունը, հակասության մեջ է մտնում նաեւ Եվրոպական երկրների ավանդական մշակութային արժեքների եւ որոշ Եվրոպական ազգերի ձեւավորման պատմական պայմանների հետ:

Այսպես, մոտ մեկ տարի առաջ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը ծնողների ներկայացրած հայցերի հիման վրա վճիռ կայացրեց. հանրային վայրերում, այդ թվում՝ կրթական հաստատություններում խաչերի առկայությունը ճանաչել որպես ծնողների իրավունքների խախտում՝ սեփական երեխաներին իրենց համոզմունքներով դաստիարակելու իրավունքի տեսանկյունից: Այդ վճիռն առաջացրեց զանգվածային բողոքներ եւ նույնիսկ ուղղակի հրաժարում՝ կատարելու այն Իտալիայում, Լեհաստանում եւ Լիտվայում, որոնք առավել ավանդապահ կաթոլիկ երկրներն են:

Անկասկած, նման խնդիրները հետագայում ավելի են խորանալու: ԵՄ հիմնարար իրավունքների խարտիայից, որի հիման վրա կայացվեց վերոնշյալ դատավճիռը, վաղը կարող են օգտվել Եվրոպական երկրներում բնակվող մահմեդականները, ինչի արդյունքում հնարավոր կդառնա օրինականորեն Եվրոպային պարտադրել օտար արժեքներ, նույն՝ շարիաթի օրենքները:

Միաժամանակ, Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում առկա պատմական հիմնախնդիրները եւս ստեղծում են կոնֆլիկտածին իրավիճակներ. անցյալի հանդեպ վերաբերմունքը եւ «պատմական սխալների» ուղղման պահանջները շարունակում են մնալ Եվրոպական օրակարգում:

Ջուզահեռ աճում է լարվածությունը ներգաղթյալների նկատմամբ, որոնք դարձել են ավելորդ բեռ Եվրոպական պետությունների սոցիալական ապահովության համակարգերի համար: Իսկ դա անխուսափելիորեն հանգեցնելու է Եվրոպական քաղաքների փողոցներում ինչպես

էթնոկրոնական, այնպես էլ սոցիալական արմատներ ունեցող կոշտ բախումների, որոնց նախերգանքը դարձան 2005թ. Փարիզում տեղի ունեցած անկարգությունները:

Պատմությունը վկայում է, որ Եվրոպան միշտ հաղթահարել է իր առջև ծառայած մարտահրավերները՝ ողջ հասարակությամբ: Սակայն ի տարբերություն 1968-ի կամ 1980-ականների՝ այսօր շատ դժվար է նորից համախմբել եվրոպացիներին: Հասարակությունները պառակտված են: Եվրոպայի ներկա քաղաքական վերնախավն այլևս ունակ չէ մոբիլիզացնել մարդկանց: Այսօրվա վիճակում այդ մոբիլիզացումն ավելի հաջող է ստացվում նոր աջերի մոտ, որոնք առաջ են քաշում մահմեդականների կամ առհասարակ ներգաղթյալների դեմ ուղղված պահանջներ:

Այս պայմաններում, անորոշ ժամանակով սառեցվում է ԵՄ-ի ընդլայնման ընթացքը, քանի որ այն առաջացնում է եվրոպական երկրների քաղաքացիների դժգոհությունը եւ դժկամությունը՝ ուրիշ երկրների սոցիալ-տնտեսական խնդիրները սեփական ուսերի վրա վերցնելու հարցում: Դրա վառ օրինակը դարձան Հունաստանի շուրջ ծավալված վերջին զարգացումները, երբ Գերմանիայի եւ այլ պետությունների բնակչությունը հավանության չարժանացրեց հունական տնտեսությունը փրկելու համաեվրոպական ծրագիրը, որտեղ որպես գլխավոր դոնոր հանդես էր գալիս Գերմանիան:

Մյուս կողմից, սակայն, Եվրոպան չի կարող ինքնամեկուսանալ, քանի որ դա հղի է աշխարհում լիակատար հեղինակազրկմամբ եւ այսօրվա դիրքերի անխուսափելի հանձնմամբ, առավել եւս, որ Ասիայում եւ Լատինական Ամերիկայում եվրոպական երկրների տեղերի համար հավակնորդների պակաս չի զգացվում:

Այսօր անորոշ է, թե ինչ զարգացման մոդել եւ փուլ են մտնում եվրոպական հասարակությունները: Ժողովրդի ձայնը մայրցամաքում սկսում է կորցնել իր ուժը. կառավարության փոփոխությունն ընտրությունների միջոցով՝ չի բերում իրավիճակի բարելավմանը: Այս պայմաններում եվրոպական ժողովրդավարությունը՝ որպես մոդել, դադարում է գործել:

Այսպիսով, ներկայում Եվրոպայում ծավալվող զարգացումները սկիզբ են տալիս լուրջ եւ անկանխատեսելի մի գործընթացի, որի արդյունքում կամ Եվրոպան նոր վերածնունդ կապրի, կամ էլ՝ ինչպես Հին Հռոմի անկումից հետո, կընկղմվի նոր «մութ դարերի» մեջ:

ԱՄՆ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆեոդոր Լուկյանով

2010թ. միջանկյալ ընտրությունների արդյունքները, որոնք անվանեցին քաղաքական երկրաշարժ, դարձան առնվազն երկրորդ աշխարհամարտից ի վեր Ամերիկայում հասարակական տրամադրությունների ամենաարագ եւ արմատական փոփոխությունը: Ընդամենը երկու տարի առաջ դեմոկրատները խորտակիչ հաղթանակ տարան, ընդ որում՝ ոչ միայն քանակական (Սպիտակ տուն, Ներկայացուցիչների պալատ, Սենատ), այլեւ որակական: Հանրապետականները ջախջախվեցին բարոյապես. 2009թ. մեկնաբանները լրջորեն քննարկում էին, թե ընդհանրապես կշտկվի, արդյոք, «մեծ հին կուսակցությունը» ձախողումից՝ պայմանավորված Ջորջ Բուշի նախագահության արդյունքներով:

Սակայն հետո քամին փչեց հակառակ ուղղությամբ: Նոյեմբերի 2-ի քվեարկությունը հանրապետականներին բերեց 1948-ից ի վեր ամենախոշոր հաղթանակը Ներկայացուցիչների պալատում: Նրանց շատ քիչ քվե չբավականացրեց, որպեսզի վերցնեն մեծամասնությունը նաև Սենատում: Հանրապետական թեկնածուները շահեցին նահանգապետական մրցավազքերի մեծ մասը: Միջանկյալ ընտրություններում նախագահական կուսակցության պարտության մեջ սենսացիոն ոչինչ չկա: Ամերիկացի ընտրողները չափազանց չեն սիրում իշխանության մենաշնորհ եւ միշտ ջանում են, գիտակցաբար, թե բնազդաբար, վերականգնել հաշվեկշիռը: Ուստի իշխանության երկու ճյուղերում մեկ կուսակցության համապարփակ գերակայության ժամանակաշրջաններն, ավելի շուտ, բացառություն են:

Ընտրությունների նախօրեին անցկացված հարցումներով՝ ամերիկացիների 62 տոկոսը գտնում էր, որ երկիրն ընթանում է սխալ ուղիով: Այն ավելի պակաս է, քան Բուշի կառավարման վերջում (այն ժամանակ այդ թիվն անցել էր 80 տոկոսը), սակայն գործող վարչակազմի համար նման գնահատականը մոտ է աղետի:

Դեռ երկու ամիս առաջ դեմոկրատների այդպիսի տպավորիչ պարտությանը չէին սպասում, բայց դրա պատճառները բացատրելի են: Բարաք Օբաման բախվեց սեփական անհավատալի ժողովրդականության հակառակ կողմին. հիասթափության խորությունն ուղիղ

համեմատական է ազդարարված հույսերի ծավալին: Երկու տարի առաջ բոլոր մեկնաբանները միաձայն զգուշացնում էին, որ ոչ մի քաղաքական գործիչ ի գորու չէ արդարացնել այն սպասումները, որոնք հասարակությունը կապում է առաջին ոչ սպիտակամորթ նախագահի թեկնածուի հաղթանակի հետ: Սակայն, օբյեկտիվ ծուղակից բացի, ուր հայտնվել է մի մարդ, ով խոստացել է փոխել Ամերիկան, գոյություն ունի նաեւ անհատականության գործոն: Այսօր նույնիսկ Օբամայի առավել համոզված կողմնակիցների շուրթերից է նրա հասցեին հնչում քննադատություն այն բանի համար, որ վերջինս ընդունակ չէ ազգին պարզորոշ բացատրել, թե ինչ եւ ինչու է անում:

Այն որակները, որ օգնեցին Բարաք Օբամային շահել 2008-ի կամպանիան, բավարար չեղան հայտարարված քաղաքականությունը հաջողությամբ իրականացնելու համար: Նրան փայլուն կերպով հաջողվեց «բռնկել» դժգոհներին՝ նրանց ներշնչելով փոփոխությունների հանդեպ հույս: Բայց արմատական բարեփոխումներին սատարելու նպատակով հասարակությանը մոբիլիզացնելու համար ընդհանուր կարգախոսներով բավարարվել չի լինի, որոնց բովանդակությունը չի հիշվում: Հարկավոր է կան շատ հասանելի եւ համբերատար բացատրություն, կան լսարանի հետ առանձնակի հուզական շփում: Որքան էլ տարօրինակ է, ո՛չ դրանում, ո՛չ մյուսում Օբաման հաջողության չի հասել:

Չնայած ոչ սովորական կեցվածքին, որը հակադրում է նախագահին ավանդական նոմենկլատուրային, նա բարձրաշխարհիկ է: Հանրությունն ավելի ու ավելի հաճախ է նրա մեջ տեսնում ժողովրդից զատված, տարօրինակ գաղափարներով ինտելեկտուալի, այլ ոչ թե մի մարդու, ով մարմնավորում է իր սպասումները:

Այս ամենը կտրուկ արագացրեց վարկանիշի անկումը: Եվ քանզի Օբաման փորձեց այդ պայմաններում անել քայլեր, որոնք շոշափում են ամերիկյան քաղաքականության սկզբունքային դրույթները (օրինակ՝ առողջապահության համակարգի բարեփոխումը եւ համաշխարհային գործերում անվերապահ գերակայությանն ապավինելուց հրաժարվելը), դարձավ ամեն կողմից քննադատության առարկա: Սեպտեմբերին ամերիկյան հեռուստաալիքներն անվերջ պատում էին իր կողմնակիցների հետ նախագահի հանդիպման այն դրվագը, որտեղ մասնակիցներից մեկը հուսահատությամբ ասում է նրան. «Ես այլեւս ի վիճակի չեմ Ձեզ պաշտպանել, դա անհնարին է»:

Փոփոխության մյուս կողմն ամերիկյան հասարակության կտրուկ բեւեռացումն է, որը սկսվեց Բուշի օրոք, իսկ Օբամայի օրոք խորացավ: Երկիրն ապրում է տնտեսական, քաղաքական, սոցիալական զարգաց-

ման բեկումնային պահ: Ընդ որում, տարբեր շերտեր ու խմբեր ունեն տրամագծորեն հակառակ պատկերացումներ, թե ինչ պետք է անել:

Երկու տարի առաջ մարդիկ, ովքեր հիասթափված էին իրենց ղեկավարներից, քվեարկեցին այն թեկնածուի օգտին, ով տեսողաբար անգամ տարբերվում է վաշինգտոնյան ինսայդերներից: Այժմ նրանց համակրանքը թեքվել է ամենատարբեր հայացքների արմատական պահպանողական կոալիցիայի կողմը, որին ցեմենտում է բացառապես ստատուս-քվոյի նկատմամբ անհանդուրժողականությունը: Փորձագետները մշում են այսպես կոչված անկախ ընտրողների աճ, այսինքն՝ նրանց, ովքեր իրենց չեն ասոցիացնում այս կամ այն կուսակցության հետ, այլ քվեարկում են իրավիճակից ելնելով:

Ընդհանուր առմամբ, այս ամենը մեծացնում է ամերիկյան քաղաքականության անկայունությունը՝ խոստանալով նոր կտրուկ շրջադարձեր. պահպանողական «հասարակ» դեղատոմսերի նկատմամբ հիասթափությունը կարող է վրա հասնել նույնքան արագ, որքան՝ Օբամայի առաջարկած «բարդ»-երի դեպքում:

Արտաքին քաղաքական ճակատում դրական փոփոխություններ չեն կանխատեսվում: Վարչակազմի «ծեռքերի ազատության» ժամանակաշրջանն անցել է. նրան հարկ է լինելու հայացք նետել հակառակորդներին, որոնք շատ հարցերում կոշտ դիրք են գրավում: Մարդկանց ցանկը, ովքեր Կոնգրեսում պիտի որոշեն արտաքին քաղաքական օրակարգը, ինքնին պատկերացում է տալիս հնարավոր տրամադրությունների մասին: Այսպես, Ներկայացուցիչների պալատի միջազգային գործերի կոմիտեն գլխավորում է Իլեանա Ռոս-Լեիթինենը, ով հայտնի է բռնապետերի եւ կոմունիզմի դեմ պայքարով ամբողջ աշխարհում, առաջին հերթին՝ Կուբայում, որտեղի ծնունդ է, բայց միաժամանակ նաեւ Չինաստանում ու Ռուսաստանում: Այդ նույն կատեգորիայից է «թեյախմության» նոր աստղ Մարիո Ռուբինոն՝ կուբացի ներգաղթյալների որդին, ով անցել է Սենատ:

Վերին պալատի առաջատար պաշտոններում են առաջադրվում նաեւ Ջոն Քեյլը, որը հակված է վավերացնելու Չարձակողական սպառազինությունների կրճատման (ՅՍԿ) պայմանագիրը միայն լրացուցիչ պայմանների ամբողջական ցանկի կատարման դեպքում, Ջիմ Դեմինթը՝ ՅՍԿ-ի կտրական հակառակորդը, եւ Ջոն Մակքեյնը, որի հայացքները Մոսկվայի նկատմամբ լավ հայտնի են: Ներկայացուցիչների պալատի մեծամասնության հավանական ղեկավար էրիկ Քանթորն Իսրայելի պաշտպանության ճանաչված կողմնակից է եւ, համապատասխանաբար, Իրանի, Սիրիայի եւ մյուսների հետ կապեր ունեցող երկրների նկատմամբ

վերաբերմունքի կոշտ թելի ներկայացուցիչ: Կոնգրեսի ղեկավարության մի շարք այլ դեմքեր կապված են ավանդական «ուժային» գծի հետ, որն ուղղված է ամերիկյան առաջատարության անվերապահ հաստատմանը:

Բարաք Օբամային այժմ հարկ է լինելու ամերիկացիների հետ փոխգործակցելու միջոցներ փնտրել: Հանրապետականները վերադարձան գործնականում այն ամենի վերանայման կարգախոսի տակ, որ երկու տարվա ընթացքում արել է նախագահը: Շատերը, ճիշտ է, հիշում են 1995–1996թթ. փորձը, երբ Հանրապետական կուսակցությունը, «պահպանողական հեղափոխության» գաղափարախոս Նյուս Գինգրիչի առաջնորդությամբ, ստացավ երկու պալատների վրա վերահսկողությունը եւ սուր դիմակայության մեջ մտավ դեմոկրատ նախագահ Բիլ Քլինթոնի հետ: Այն ժամանակ պահպանողականների ճնշումն այնքան հզոր էր, որ արդյունքում շփոթեցրեց ընտրողներին, որոնք 1996թ. քվեարկեցին Քլինթոնի պաշտոնավարման երկրորդ ժամկետի օգտին:

Ներկայիս իրավիճակն ինչ-որ բանով նման է նախորդին, սակայն կան նաեւ էական տարբերություններ: Մի կողմից՝ անհասկանալի է, թե Օբաման որքանով է պատրաստ աշխատելու նոր պայմաններում, ինչը պահանջում է քաղաքական մեծ հմտություն: Քլինթոնը՝ նախագահական պաշտոնի ամենաճկուն քաղաքական գործիչներից մեկը, կարողացավ գլուխ հանել իրավիճակից, բայց ոչ բոլորն են Օբամայի մոտ տեսնում այդ որակները: Մյուս կողմից՝ Գինգրիչն այն ժամանակվա հանրապետականների գաղափարական ու քաղաքական անվիճելի առաջնորդն էր, ով իրավասու էր նրանց անունից քաղաքականություն վարել:

Հանրապետական նոր մեծամասնության կազմը գաղափարապես համախմբված չէ, զգացվում է «թեյախնության» սիրահարների ազդեցությունը: Նրանք, ակնհայտ է, շարունակելու են ազդել հասարակական-քաղաքական մթնոլորտի վրա, սակայն ազդեցության բնույթը դժվար է հաշվարկել, քանզի շարժումը խիստ տարաբնույթ է: Հետեւաբար, մեծամասնության ղեկավարության համար դժվար կլինի հանդես գալ բոլորի անունից:

Ինչպես էլ որ լինի, արդեն հասկանալի է, որ 2012թ. Սպիտակ տան համար ճակատամարտը լինելու է կատաղի եւ անողորմ:

Gazeta.Ru

ԹԱԼԻՔՆԵՐՆ ՍԿՍՈՒՄ ԵՆ ՎԵՐՑՆԵԼ ԱՖՂԱՆՍՏԱՆԸ

Քարուլյան կառավարության ու «Թալիբան» շարժման ներկայացուցիչների միջև խաղաղ բանակցությունների մասին Աֆղանստանից գրեթե ամեն օր եկող հաղորդագրությունները (եւ անմիջապես հերքումները) համոզում են, որ բանակցությունները ոչ միայն առկա են, այլևս դուրս են եկել սկզբնական կապերի հաստատման փուլից: Եվ այդ գործընթացն արագ զարգանում է՝ չնայած «Քարզայի ծախու խամաճիկային հանցախմբի» (ինչպես նրան թալիբները քամահրանքով անվանում են) ներկայացուցիչների հետ որեւէ բանի շուրջ պայմանավորվելու թալիբների ցանկության բացակայությանը:

Համիդ Քարզայի մարդկանց ու թալիբների միջև առաջին հանդիպումներն անցկացվեցին 2010թ. հունվարին եւ մայիսին, Մալդիվյան կղզիներում: Դրանք ոչ պաշտոնական էին ու գաղտնի. ընդ որում, «Թալիբանի» ղեկավարները ոչնչ էին, թե չեն շփվելու ՆԱՏՕ-ական օկուպացիոն զորքերի հետ, մինչև նրանք չհեռանան երկրից: Սկզբնական շփումներն անցկացվեցին Մալդիվներում, քանզի դա այն մի քանի երկրներից է, որոնք աֆղաններին մուտքի արտոնագիր տրամադրում են օդանավակայան ժամանելուն պես, եւ դրանք պետք չէ նախօրոք պատվիրել: Մայիսյան բանակցություններին մասնակցեց շուրջ 50 մարդ, որոնք կազմակերպել էր Ջարիր Չեքմաթիարը՝ ճանաչված դաշտային հրամանատար եւ «Չեզր ի Իսլամ» կուսակցության առաջնորդ Հուլբադդին Չեքմաթիարի փեսան:

Ինքը՝ Աֆղանստանի ներկայիս նախագահ Համիդ Քարզայը, ստիպված եղավ ընդդիմադիրների հետ բանակցություններին համաձայնել միայն 2010թ., երբ անգամ իրեն էր պարզ, որ եթե ինքը ՆԱՏՕ-ի հետ չի կարող հաղթել «Թալիբանին», ապա առանց աջակցության առավել եւս՝ կջախջախվի: Մալդիվյան հանդիպումներին արեւմտյան երկրներին նույնիսկ դիտորդի կարգավիճակով չէին հրավիրել:

Համաշխարհային ՁԼՄ-ները հաստատում են, որ վերջին ամիսներին բանակցությունների մի քանի փուլեր անցկացվել են անգամ Քարուլում եւ նրա մերձակայքում: Քարզայի ներկայացուցիչները հանդիպել են պակիստանյան Քվետա քաղաքի (որն ակտիվորեն մասնակցում է Աֆղանստանի պատերազմին) թալիբների խորհրդի (շուրայի) անդամների,

երկրի առավել հզոր պարտիզանական կազմավորում համարվող՝ այսպես կոչված «Ջազանի ցանցի» առաջնորդների, ինչպես նաև Աֆղանստանի արեւելքում գտնվող Փեշավար քաղաքի խորհրդի անդամների հետ, որտեղ նույնպես ուժեղ է թալիբների ազդեցությունը: Միաժամանակ պարզ է, որ բնավ ոչ բոլոր պարտիզանական շարժումներն են ընդհանրապես համաձայն խոսել քաբուլյան պաշտոնական իշխանությունների հետ: Էլ չխոսենք այն մասին, որ դեռևս իր ծանրակշիռ խոսքը չի ասել Պակիստանը, որն աֆղանական պատերազմի շարունակման վրա ցուցաբերում է ամենագլխավոր ազդեցությունը, թեև համարվում է ԱՄՆ դաշնակիցը տարածաշրջանում:

Ի դեպ, երկու կողմերն էլ բանակցություններին փորձում են իրենց համար ապահովել «ուժի դիրք», որի համար ՆԱՏՕ-ական ISAF (Անվտանգության աջակցման միջազգային ուժեր) կոալիցիան կտրուկ ինտենսիվացրել է օդից հարձակումները թալիբների խմբերի վրա ոչ միայն Աֆղանստանում, այլև պակիստանյան տարածքում: ՆԱՏՕ-ի տվյալներով, վերջին երեք ամիսներին Աֆղանստանի տարածքում գտնվող նշանակետերի վրա մարտական եւ անօդաչու ինքնաթիռների կողմից նետվել ու արձակվել է 1600 միավոր ռումբ եւ հրթիռ, որոնց գրեթե կեսը՝ սեպտեմբերին: Նախորդ տարվա նույն եռամսյա ժամանակահատվածում օդից նետվել է սոսկ 1031 ռումբ, որից 257-ը՝ սեպտեմբերին:

Ընդ որում, ամերիկյան ռազմական տեսաբանները գտնում են, որ նման մարտավարությունը թալիբների համար կստեղծի դժվարություններ, կխախտի նրանց հրամանատարական-վերահսկողական համակարգը, երկպառակություն կսերմանի մարտադաշտում գտնվող պարտիզանների եւ Պակիստանում նստած առաջնորդների միջև: Բացի այդ, ՆԱՏՕ-ն հաստատում է, թե երկրի ներսում գործում են ՆԱՏՕ-ական հատուկ նշանակության խմբեր, որոնց խնդիրն է «Թալիբանի» մարտիկների ֆիզիկական ոչնչացումը: Նրանք այն իրականացնում են, սակայն նույնպես կորուստներ են կրում, որոնց մասին խիստ անաղմուկ է հաղորդվում:

«Թալիբանն», իր կողմից, նույնպես ձեռքերը ծալած չի նստում եւ, չնայած ՆԱՏՕ-ական եւ կառավարական զորքերի 15-ապատիկ գերակշռությանը (380 հազ. զինվոր՝ 22-30 հազ. զրոհայինի դեմ), կարողանում է ոչ միայն ականների վրա պայթեցնել արեւմտյան պարեկներին, երթի ժամանակ այրել շարասյուները, այլև գրավել ամերիկյան հենակայանները: Սեպտեմբերի կեսերին նրանք հսկողություն սահմանեցին Աֆղանստանի հյուսիս-արեւելքում գտնվող, Պակիստանին սահմանակից Քունար նահանգի Մարավար գավառի ամերիկյան հենակայանի վրա:

Ինչպես հայտարարեց թալիբների դաշտային հրամանատար Քարի Ջիարա Ռահմանը, ամերիկյան օկուպանտները լքեցին հենակայանը եւ ուղղաթիռներով հեռացան՝ թողնելով մեծ քանակությամբ սպառազինություն ու ռազմական տեխնիկա:

Ընդ որում, ԱՄՆ-ի այդ օբյեկտը համարում էին կարեւորներից մեկը երկրի հարավում, քանզի այն նաեւ վերահսկում էր հարեւան Պակիստանի աֆղանական ցեղերով բնակեցված անդրսահմանյան Բաջուր շրջանը: Հենակայանում գտնվում էին շուրջ 500 ամերիկացի զինվոր եւ մարտական ուղղաթիռներ, սակայն նրանք էլ չկարողացան կասեցնել գրոհող թալիբներին:

Իսկ ավելի վաղ՝ 2010թ. ապրիլին, թալիբները գրավել էին մեկ այլ ամերիկյան հենակայան Քորենհալ հովտում: Ամերիկյան գրավված ռազմակայանում շրջող մորուքավոր մարտիկների տեսակադրերը ցուցադրեցին արաբական խոշորագույն հեռուստաալիքները: Ճիշտ է, ամերիկյան զինվորական ղեկավարությունն այն ժամանակ հայտարարեց, թե թալիբները չեն գրավել հենակայանը, այլ ԱՄՆ-ը պարզապես լքել է այն, քանզի, իբրև թե, այն նշանակալի ռազմավարական արժեք չէր ներկայացնում եւ սոսկ շեղում էր ուշադրությունը կարեւոր ուղղություններից:

Սակայն, չնայած այս բոլոր հնարքներին, ՆԱՏՕ-ական զինվորականության կորուստներն Աֆղանստանում անընդհատ աճում են: Հատկապես խոցելի են զորքերի մատակարարման՝ Պակիստանից եկող ճանապարհները, որոնցով է անցնում ռազմական բեռների մինչեւ 80 տոկոսը. այնտեղ այրված 20-30 տոննանոց բեռնատարների թիվը վերջին ամիսներին անցել է մի քանի հարյուրից:

Գործը հասավ նրան, որ հոկտեմբերի կեսերին ՆԱՏՕ-ն դիմեց Ռուսաստանին՝ նրա տարածքով, ի հավելումն ոչ ռազմական բեռների, նաեւ մարտական նշանակության գույք տեղափոխելու խնդրանքով: Այն բանից հետո, երբ գրոհայինները Քվետա քաղաքի շրջանում միանգամից հրդեհեցին ՆԱՏՕ-ին պատկանող երեք տասնյակից ավելի նավթային տանկերներ, դաշինքի ղեկավարությունը Մոսկվային արդեն պաշտոնապես նման առաջարկություն ներկայացրեց: Սակայն, ՋԼՄ-ների տվյալներով, Ռուսաստանն ի պատասխան հայտարարել է, որ թույլատրում է միայն ոչ ռազմական նշանակության բեռների՝ սննդամթերքի, դեղորայքի, վրանների եւ այլն, փոխադրումը:

Ջորքերի բնականոն մատակարարման հնարավորության նման բացակայությունը՝ Աֆղանստանի գրեթե ողջ տարածքով մոջահեդների ակտիվության միաժամանակյա մեծացման եւ մի շարք հարավային

շրջանների ու հյուսիսարեւելյան նահանգների վրա նրանց վերահսկողության հետ մեկտեղ, ստիպում է ՆԱՏՕ-ին թալիբների հետ հաշտության միջոցներ փնտրել:

Բացի այդ, ՆԱՏՕ-ն դիմեց Anso վերլուծական խմբի ծառայություններին, որը Աֆղանստանի անվտանգության հարցերով խորհրդատվություն է մատուցում միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին: Այն, գնահատելով իրավիճակը, ՆԱՏՕ-ին խորհուրդ տվեց «մտածել, թե ինչպես թալիբներին ներգրավել համագործակցության մեջ, այլ ոչ թե խուսափել նրանցից»: Չնայած ՆԱՏՕ-ական գեներալների հայտարարություններին, ովքեր, այնուամենայնիվ, ձգտում են ավելի շատ խոսել վիրավորականի հասնող փոքրաթիվ հակառակորդի հանդեպ ռազմական հաղթանակի հավանականության մասին, վերլուծաբանները նաև պնդում են, թե «որեւէ կասկածից դուրս է, որ «Թալիբան» անընդհատ աճող քաղաքական դեր է խաղալու Աֆղանստանում»:

Այնպես որ, ռազմական լուրջ մասնագետների համար ավելի ակնառու է դառնում, որ 2001թ. Աֆղանստանում նախածեռնած պատերազմն արեւմտյան դաշինքը տանուլ է տալիս եւ կարիք ունի բանակցությունների: Սակայն, միաժամանակ, The New York Times թերթը գրում է, որ «քանի դեռ խռովարարներն իրենց հաղթանակած կողմ են համարում, առանձնապես չեն ցանկանում որեւէ բանի շուրջ պայմանավորվել... եւ պատերազմը դադարեցնելու մեծ ցանկություն չեն դրսեւորում»: Եվ մեջբերում է Կենտրոնական հետախուզական վարչության ղեկավար Լեոն Փանեթայի խոսքերը, որը գտնում է, որ ներկայումս «թալիբների կողմից հաշտության լուրջ փորձերի առանձնակի նշաններ չկան»:

Այսօր արեւմտյան դաշինքն Աֆղանստանում գտնվում է ավելի վատ վիճակում, քան խորհրդային զորքերը՝ ավելի քան 20 տարի առաջ: Այն ժամանակ Աֆղանստանում գտնվող խորհրդային զորախումբը կազմում էր 80-100 հազ. զինվոր, աֆղանական բանակի հետ միասին իր տրամադրության տակ ուներ 200 հազ. մարդ, որոնց դիմակայում էր 140 հազ. մոջահեդ, որոնք ԱՄՆ-ի կողմից գրեթե անթաքույց օժանդակություն էին ստանում:

Այժմ գրեթե երկու անգամ ավելի քանակությամբ (150 հազ.) ու առավել արդիական սպառազինությամբ ՆԱՏՕ-ական զորախումբը եւ 230 հազ. հասնող կառավարական ուժերը ամոթալի պարտություն են կրում թալիբներից, որոնց թվաքանակը գնահատվում է 22-30 հազ. եւ որոնք արտաքին աջակցություն գրեթե չեն ստանում՝ հատկապես սպառազինության գծով: Իսկական «պարադոքս», որ ծավալվում է ողջ աշխարհի աչքի առջեւ:

Ընդ որում, ամերիկացիները, բնականաբար, փորձում են տանուլ տված ժամանակ ուրախ դեմք ընդունել: Դրա համար ամերիկացի հրամանատարները, փորձելով սիրաշահել թալիբներին եւ նվազեցնել սեփական կորուստները, հակառակորդին յուրաքանչյուր ամիս միջնորդների միջոցով տասնյակ միլիոնավոր դոլարներ են վճարում, միայն թե փոշոտ սերթուկներով մորուքավոր պարտիզանները չհարձակվեն իրենց զորքերի շարասյուների վրա: Հավանաբար, թալիբական ռեկետի այս յուրօրինակ տեսակը հետագայում մտնի ռազմական պատմության եւ մարտավարության դասագրքերի մեջ:

Այս ամենը տեղի է ունենում Աֆղանստանում ՆԱՏՕ-ական կոալիցիայի անդամների մարտական խանդավառության աստիճանական նվազման ֆոնին, որը պատերազմի կեսերին ուներ մինչեւ 47 անդամ: Իրենց զորքերն արդեն դուրս են բերել հոլանդացիները, այդ նույնը պատրաստվում են անել բրիտանացիները: Բոլոր երկրներից, որոնք մտնում են ISAF-ի մեջ, այսօր պատերազմի հաղթական ավարտի օգտին հաստատականորեն արտահայտվում է միայն Ավստրալիան, որը աֆղանական լեռներում է պահում իր մեկուկես հազար զինվորներին:

ԱՄՆ-ն արդեն հայտարարել է, որ 2011թ. հուլիսին սկսելու է իր ուժերի աստիճանական դուրսբերումն Աֆղանստանից: Այս ժամկետը ուժգին խթանել է պարտիզանների ակտիվությունը, որոնք, զգալով, որ շուտով Քարզայի վարչակարգը մնալու է առանց արտասահմանյան ռազմական աջակցության, սաստկացրել են տրանսպորտային երթուղիների ականապատումը, քաղաքներում «մահապարտների գոտիներով» ինքնասպանների գրոհները եւ ՆԱՏՕ-ական կայազորների վրա հարձակումները:

«Наш мир»

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Հարությունյան

ՀԱՅ – ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ 1

Ռուբեն Մելքոնյան

ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՈՒՐՔԻԱ.

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՄԻՏՈՒՄՆԵՐ 6

Հայկ Գաբրիելյան

ԹՈՒՐՔԻԱ – ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10

Սեւակ Սարուխանյան

ԻՐԱՆ. ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ 17

Արտաշես Տեր-Հարությունյան

ԹՈՒՐՔԻԱ – ՉԻՆԱՍՏԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ 21

Արաքս Փաշայան

ԻՍԼԱՄԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ԱԼԻՔ

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ 26

Սուրեն Սարյան

ԵՎՐՈՊԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՈԴԵԼԻ ՃԳՆԱԺԱՍԸ 31

Ֆեոդոր Լուկյանով

ԱՄՆ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 36

ԹԱԼԻԲՆԵՐՆ ՍԿՍՈՒՄ ԵՆ ՎԵՐՑՆԵԼ ԱՖՂԱՆՍՏԱՆԸ 40

Շապիկին պատկերված է
Արմադան լեռը
(Գեղարքունիք)

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մմնուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՍՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: